


24367

Գ. ԴՈՐՈՎԵՆՍԿԻ

ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ
ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ
ՇԱՐԺՈՒՄԸ



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1940

ՊՐՈՒԵՏԱՐՆԵՐ ԲՈՒՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՐ

331.8705

7-66 Գ. ԳՈՐԲՈՎԵՆՍԿԻ
ստ

ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ
ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ
ՇԱՐԺՈՒՄԸ

(Աշխատանքի ստախանովյան արտադրողականությունը
և կոմունիզմի համար մղվող պայքարը)

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԳԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1940

03 APR 2013

24367

15 JAN 2010

2456
40

Г. ДОБРОВЕНСКИЙ
НЕПРЕОДОЛИМОЕ ДВИЖЕНИЕ
СОВРЕМЕННОСТИ

Государственное издательство политической литературы
Ереван ● 1940

I. ՄԵՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ՓԱՍՏԸ

Լենինի—Ստալինի՝ կոմունիստական հասարակություն կառուցելու մասին յեղած ուսմունքի մեջ հիմնական դրույթներից մեկը հանդիսանում է պայքարն աշխատանքի այնպիսի արտադրողականության համար, վորը շատ ավելի բարձր լիներ, քան կապիտալիզմի՝ տեխնիկա-տնտեսական տեսակետից ամենազարգացած յերկրների կողմից ձեռք բերված արտադրողականությունը, պայքարն աշխատանքի այնպիսի արտադրողականության համար, վորը թույլատրեր կենսագործել կոմունիզմի սկզբունքը՝ «յուրաքանչյուրից՝ ըստ նրա ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ նրա պահանջմունքների»:

Նշելով, վոր «աշխատանքի արտադրողականությունը, այդ, վերջին հաշվով, ամենակարևորն, ամենազրկազրկն է նոր հասարակակարգի հաղթանակի համար», Վլադիմիր Իլյիչ Լենինն ասում էր, վոր կոմունիզմն սկսվում է այնտեղ, վորտեղ յերևան է գալիս հենց իրենց բանվորների անձնագոհ-հոգացողությունն աշխատանքի արտադրողականությունն ավելացնելու վերաբերյալ: Լենինի գործի մեծ շարունակողը, մեր առաջնորդ ու ուսուցիչ ընկեր Ստալինն ավելի ևս զարգացրեց աշխատանքի արտադրողականության մասին լենինյան ուսմունքը, վորպես կոմունիստական հասարակություն կառուցելու մասին յեղած ուսմունքի հիմնական մասերից մեկը:

Բոլշևիկյան կուսակցության կողմից ղեկավարվող խորհրդային ժողովուրդը՝ գինված Լենինի—Ստալինի հանճարեղ ուսմունքով կոմունիստական հասարակության կառուցման ասպարեզում աշխատանքի արտադրողականության ունեցած դերի մասին, սոցիալիստական արտադրողականության համար մղած պայքարում պատմական հաղթանակներ ձեռք բերեց:

Դեռևս 10 տարի առաջ ընկեր Ստալինն իր «Մեծ բեկման տարին» հոգվածում գրում էր.

«Հազիվ թե կարելի յե կասկածել, վոր վերջին տար-

վա մեր չինարարութեան ամենակարեւոր փաստերից մեկը, յետեւ վոչ ամենակարեւոր փաստը, այն փաստն է, վոր մեզ հաջողվեց վնասակար քեկում առաջ բերել աշխատանքի արտադրողականութեան ընդարձակումը»:

Սոցիալիզմի յերկիրն այս տասնամյակի ընթացքում աշխատանքի արտադրողականութեան բարձրացման ասպարեզում ձեռք բերեց նոր, ավելի ևս վճռական հաջողութիւններ:

Խորհրդային իշխանութեան 20 տարւա ընթացքում ԽՍՀՄ-ն արդյունաբերութեան մեջ բանւորի աշխատանքի տարեկան արտադրողականութիւնը կապիտալիստական Ռուսաստանում ձեռք բերված ամենաբարձր մակարդակի համեմատութեամբ բարձրացրեց ավելի քան յերեք անգամ և մեկ ժամվա արտադրանքը՝ առկէի քան չորս անգամ:

Առաջին հնգամյակի տարիներէ ընթացքում սոցիալիստական խոշոր արդյունաբերութեան մեջ աշխատանքի արտադրողականութիւնը բարձրացավ 41 տոկոսով, իսկ յերկրորդ հնգամյակի տարիներում այն լրացուցիչ կերպով աճեց 82 տոկոսով:

Սոցիալիստական հողագործութեան մեջ 1937 թ. աշխատանքի արտադրողականութիւնը մոտ յերկու անգամ ավելի բարձր էր, քան մենատնտես-միջակի տնտեսութեան մեջ:

ԽՍՀՄ արդյունաբերութեան մեջ մեկ բանւորի արտադրանքը 1936 թ. 1913 թ. համեմատութեամբ կազմեց 308,8 տոկոս: Յետ յետեւ հաշիւի առնենք, վոր աշխատանքային ուրվա տեղողութիւնը մեզ մոտ 10—11 ժամից կրճատվել է մինչև 6—7 ժամի, ապա դուրս կգա, վոր ԽՍՀՄ մեջ մեկ բանւորի մի ժամվա արտադրանքը 1913 թ. համեմատութեամբ աճել է վոչ պակաս, քան չորս անգամ:

Նույն այդ ժամանակ բանւորի տարեկան արտադրանքը ԱՄՆ-ում, 1913 թ. համեմատութեամբ, 1936 թ. աճել է միայն 50 տոկոսով: Անգլիայում տարեկան արտադրանքն այդ ժամանակի ընթացքում աճել է լոկ 32 տոկոսով:

Տնտեսութեան սոցիալիստական սխտեմը հիմնվում է ժամանակակից նոր տեխնիկայի վրա, բարձր զարգացած ծանր ինդուստրիայի վրա, ավելի ևս զարգացած մեքենայինութեան վրա, վորը մեր ժողովրդական տնտեսութեանը տալիս է նրան անհրաժեշտ արտադրութեան գործիքները:

Մեր արդյունաբերութիւնը և ժողովրդական ամբողջ տնտեսութիւնն արագորեն նորագույն տեխնիկայով հաշեցնելը հիմ-

նական աղբյուրներից մեկն է, վորը նպաստում է աշխատանքի արտադրողականութեան անշեղորեն բարձրացնելու այնպիսի առեմպերով, վորոնց մասին կապիտալիստական աշխարհը յերազել անգամ չի կարող:

Վորպես յերկրի ստալինյան ինդուստրացման անմիջական հետեւեք, մենք այժմ ունենք հզոր ինդուստրիա, աշխարհում ամենախոշոր, նորագույն տեխնիկայով զինված սոցիալիստական դշուղատնտեսութիւն: Գյուղատնտեսական արտադրութեան հիմնական պրոցեսների մեքենայացման գծով մենք աշխարհում գրավել ենք առաջին տեղը:

Մեր ժողովրդական տնտեսութիւնն արագորեն նորագույն տեխնիկայով հաշեցնելը թույլ տվեց հսկայական աշխատանք կատարել արդյունաբերութեան հիմնական ճյուղի, այն է՝ արդյունահանող արդյունաբերութեան ամենից ավելի ծանր և աշխատանքալարտալիստական պրոցեսները մեքենայացնելու գծով: Ստորև բերված թվերը ցույց են տալիս վոչ միայն այդ պրոցեսների մեքենայացման աստիճանը, այլև այդ մեքենայացման արագ աճումը, վորի տեմպերը կապիտալիզմի ուժից վեր են: Ածուխի հանույթի մեջ հատման մեքենայացումն առաջին հրնգամյակի սկզբում կազմում էր 15,7 տոկոս, իսկ յերկրորդ հրնգամյակի սկզբում (1932 թ.)—արդեն 65,4 տոկոս: 1937 թ. ածուխի հատման մեքենայացումը հասավ համարյա 90 տոկոսի, վորը և ԽՍՀՄ ածուխի հատման մեքենայացումը դուրս բերեց աշխարհում առաջին տեղերից մեկը: 1928 թ. ածուխի տեղափոխման մեքենայացումը կազմում էր մոտ 15 տոկոս, 1932 թ.—76,5 տոկոս, իսկ 1937 թ.—84,6 տոկոս: Ինդուստրիան տեխնիկայով հաշեցնելու մեր տեմպերի համար առանձնապես ցուցանշական է ածխարդյունաբերութեան մեջ ածուխի փոխադրման մեքենայացումը: Բավական է ասել, վոր միայն 1932 թ. ածուխի փոխադրման մեքենայացումը հաղիվ էր հասնում 15 տոկոսի, իսկ 1937 թ. այն արդեն հասավ 47,6 տոկոսի:

Վլադիմիր Իլյիչ Լենինը բազմիցս ընդգծել է տորֆի հանույթի մեքենայացման բացառիկ նշանակութիւնը, վորն արդարացիորեն համարվում է ամենից ավելի աշխատանքալար ծանր աշխատանքը: Յետեւ առաջին հնգամյակի սկզբին տորֆի հանույթի աշխատանքները մեղանում մեքենայացված էյին միայն 15 տոկոսով, ապա 1937 թ. հանույթի մեթոդների մեքենայացման տեսակարար կշիռը հասավ 75 տոկոսի:

Արտադրական պրոցեսների մեքենայացման բնագավառում մեր առջև ելլ ավելի զբաղեցրող խնդիրներ են կանգնած: Մոտակա հնգամյակների ընթացքում մեզ հարկավոր է լինվին ավարտել ժողովրդական տնտեսության բոլոր նյութերի մեքենայացումը, քանի վոր սոցիալիզմի ժամանակ մեքենայացումը մարդու ազատագրման, նրա աշխատանքի դյուրացման, նրա կյանքի պայմանների բարելավման գործիքն է:

Բայց միմիայն աշխատանքի պրոցեսները մեքենայացնելով չի կարելի ապահովել տեխնիկական բազայի նախապատրաստումը, վորպեսզի սոցիալիզմից աստիճանաբար անցնենք դեպի կոմունիզմ, այսինքն՝ դեպի զարգացման այն նոր շրջանը, վորի մեջ մտել է մեր յերկիրը: Նվաճումն այն բարձր արտադրողականութան, վորը մեզ պիտի թույլատրի սահմանել կոմունիստական հասարակութան սկզբունքը—«յուրաքանչյուրից՝ ըստ նրա ընդունակութունների, յուրաքանչյուրին՝ ըստ նրա պահանջմունքների», մեզ մոտ կենսադործվում է գիտութան ու տեխնիկայի բոլոր բնագավառների չտեսնված պրոգրեսի և մեր հայրենիքի բնական անապառ հարստությունների մաքսիմալ ոգտագործման հիման վրա:

Մեզ մոտ՝ ԽՍՀՄ մեջ տեխնիկայի զարգացումը կրում է արագացած բնույթ: Տեխնիկայի զարգացման մեջ մենք քանի զնում, այնքան ավելի շատ ենք կիրառում պլանային սկզբունքը: Սոցիալիստական պլանավորման ոգնությամբ մենք արտադրական պրոցեսների բոլոր ողակներում հետեողականորեն ոգտագործում ենք տեխնիկական-առաջավոր զաղափարները: Մեր արդյունաբերության մեջ քանի զնում, այնքան ավելի յեն կլրատվում, որինպակ, յերկրի լայն ելեկտրիֆիկացիայի վրա հիմնված ավտոմատիկան ու տելեմեխանիկան: Ավտոմատիկ զաղափարները, տեղակայանքներից, ագրեդատներից մենք քանի զնում, այնքան ավելի յենք անցնում լիովին ավտոմատացված ձեռնարկությունների: Իսկ աստիճանաբար նման ձեռնարկությունների անցնելը, այսինքն ելեկտրականության վրա հիմնված ավտոմատիզացիայի արմատացումը, անսահմանափակ հնարավորություններ և բացում աշխատանքի արտադրողականության համար, հիմք է ստեղծում մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև յեղած հակադրությունը լիովին վերացնելու համար:

Լենինի—Ստալինի կուսակցության ղեկավարությամբ մեր յերկրում արագ տեմպերով զարգանում է ֆիմիան և ֆիմիական

արդյունաբերությունը: Յերկրի արտադրողական ուժերի զարգացման և նյութական կուլտուրայի աճման ասպարեզում ավտոմատիզացիայի կողքին վիթխարի գործոն է հանդիսանում քիմիկացիան: Այդ մեր հայրենիքի պաշտպանունակության ամրապնդման հզոր միջոցն է:

Արտադրական պրոցեսների ելեկտրիֆիկացիան, մեխանիկացիան, ավտոմատիզացիան և քիմիկացիան հզոր գործոններ են կոմունիստական հասարակություն կառուցելու համար աշխատանքի անհրաժեշտ արտադրողականություն ձեռք բերելու գործում: Այդ գործոնները մեզանում կարելի յեղավ լայն կերպով կիրառել և նրանց կիրառում են շնորհիվ ինդուստրացման ստաբիլիտետի այն պլանի անշեղ իրագործման, վորն ապահովում է յտրիքային մեքենաշինության առաջատար դերը:

Ինդուստրացման ստալինյան պլանը լուծեց ժողովրդական տնտեսության սոցիալիստական կազմակերպության հիմնական պրոբլեմը, արտադրողական ուժերի նիշտ տեղաբաշխման պրոբլեմը, վորն ապահովեց մեր բնական շատ հարուստ ռեսուրսների ամենից ավելի եֆեկտիվ ոգտագործման հնարավորությունը: Դրա շնորհիվ ժամանակակից տեխնիկայի վրա հիմնված հարյուրավոր արդյունաբերական ձեռնարկություններ աճեցին ազգային հանրապետություններում, մեր հայրենիքի ամենահեռավոր ծայրերում, առաջներում հետամնաց այդ շրջանները զարմնելով ծաղկուն:

«Մենք ինչպես ել վոր զարգացնելու լինենք ժողովրդական տնտեսությունը,—ասում էր ընկեր Ստալինը Համկ(բ)ի XVI համագումարում տված իր զեկուցման մեջ,—չի կարելի յուր զնալ առանց այն հարցի, թե ինչպես պետք է ճիշտ կերպով տեղաբաշխել արդյունաբերությունը, վորպես ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղ»:

Ինդուստրացման ստալինյան պլանն այդ հարցը լուծեց ամենից ավելի նիշտ և ոացիմալ ձևով: Արեւելքում ստեղծված է յերկրորդ ածխա-մետալուրգիական բազան: Ուրալ-Կուզնեցկի կոմբինատը միացրեց Կուզնեցկի կոքսացող ածուխը Ուրալի հանքաքարի հետ: Կառուցվել են ավտոմոբիլային և տրակտորային գիգանտներ: Խիստ կերպով աճել է Ուրալի, Սիբիրի, Ղազախստանի, Հարավի սև և գունավոր մետալուրգիան: Յերկրում կառուցվել են մետալուրգիայի, մեքենաշինության, քիմիայի,

եննրդետիկայի գիղանտներ: Նոր ստեղծված ածխային մետա-
լուրդիական և եննրդետիկ բազաները սնում են նոր և արմատա-
պես վերակառուցված գործարանները: Աճեցին և զարգանում են
արդյունաբերության նոր ճյուղեր, վորոնք յերբեք չեն յեղել
մինչհեղափոխական Ռուսաստանում:

Սոցիալիզմն ամբողջ յերկրում ստեղծել է նոր հզոր ին-
դուստրիալ կենտրոններ և ծայրերիկներն անչեղորեն բարձրաց-
նում և հասցնում է առաջավոր շրջանների մակարդակին: Կուզ-
նեցիկ մետալուրդիական կոմբինատը Ստալինկոմ, Տաշենթա-
շը, բամբակի վիթխարի կոմբինատները Տաշքենդում և Բառնա-
ուլում, գունավոր մետաղների վերամշակման գործարանները Ղա-
զախստանում—հարյուրավոր ու հազարավոր առաջավոր սքանչե-
լի ձևանարկություններ—այժմ աշխատում են հեռավոր ծայրեր-
կրներում, վորտեղ առաջ չի յեղել վոչ մի թեկուզ քիչ թե շատ
խոշոր գործարան:

Խորհուրդներ յերկրում

«... արտադրության զարգացումը յենթարկված է վոչ
թե մրցության ու կապիտալիստական շահույթ ապահովե-
լու սկզբունքին, այլ պլանային դեկալարման և աշխատա-
վորության նյութական ու կուլտուրական մակարդակը
սխտեմատիկորեն բարձրացնելու սկզբունքին» (Ստալին):

Անչեղորեն կենսազորեցվել ինդուստրացման ստալինյան
պլանը, մենք ոգտազործում ենք տնտեսության սոցիալիստական
սխտեմի առաջնությունները: Ահա թե ինչու մենք հասանք ար-
տադրողական ուժերի ճիշտ տեղաբաշխմանը, կարողացանք ստեղ-
ծել առաջնակարգ տեխնիկայով հագեցված հզոր արդյունաբե-
րություն, լուծել պատմական մեծ նշանակություն ունեցող
տեխնիկական պրոբլեմներ, վորոնք կապիտալիզմի ուժերից վեր
են:

Այնտեղ, կապիտալիստական հասարակության մեջ, արտա-
դրվում է այն և այնքան, ինչը և վորքան կարելի յե արտադրել
շահույթով: Կապիտալիստական կարգի պայմաններում արտա-
դրողական ուժերի պլանային տեղաբաշխումն աներևակայելի յե:
Արտադրության անարխիան, շահույթի հետեից ընկնելը, կոն-
կուրենցիան, կապիտալիստական կարգի բուն էությունը թույլ
չեն տալիս արտադրողական ուժերի տեղաբաշխման պրոբլեմները
լուծել ի շահ վողջ ժողովրդական տնտեսության: Կապիտալիս-
տական յերկրներում արտադրողական ուժերի տեղաբաշխումը

կատարվում է տարերայնորեն, կախված առանձին կապիտալիստ-
ների շահերից, վորոնք ձգտում են իրենց համար հնարավորին
չափ մեծ շահույթներ ստանալ:

Կարելի յե բերել բաղմաթիվ որինակներ, վորոնք ակնառու
կերպով ցույց են տալիս կապիտալիզմի անզորությունը՝ իրա-
գործելու գիտական—տեխնիկական այն մեծ զաղախարները, վո-
րոնք ընդունակ են զգալիորեն ավելացնելու յերկրի արտադրո-
ղական ուժերը: Այդպիսի որինակ է Լամանչի տակ նախատեսվող
թունելը, վորի մասին 26 տարի առաջ գրել է Լենինը «Քաղաքա-
կրթված բարբարոսություն» հոդվածում, այդպիսի որինակ է
Ջիրբալտարի ամբարտակի նախագիծը և Սահարայի վոռոգման
նախագիծը:

Հայտնի յե, որինակ, վոր տեխնիկան վաղուց արդեն լուծել
է միասնական բարձրավոլտ եներգետիկ ողակի ստեղծման պրոբ-
լեմը, վորը թույլ է տալիս ուլտրաբարձր լարման ելեկտրոններ-
գիան հազորդել հսկայական տարածության վրա: Բայց և այն-
պես մինչև այժմ վոչ մի կապիտալիստական յերկիր ի վիճակի
չէ բարձրավոլտ ցանց ստեղծելու՝ եննրդետիկ չլթայի յուրա-
քանչյուր ողակը պետք կլիներ տեղավորել Փարբիկանտի, գոր-
ծարանատիրոջ, կալվածատիրոջ հոգում, վոր վոտնձգություն
կլիներ նրանց մասնավոր սեփականության դեմ:

«Ջրվեժներ ունեցող Փարբիկանտները հեռացնում են
ջրվեժներ չունեցող Փարբիկանտներին այդ բնական ուժի
գործադրումից...» (Մարքս):

Իսկ մեզ մոտ, ԽՍՀՄ մեջ միասնական բարձրավոլտ եներ-
գետիկ ողակի ստեղծման գրանդիոզ խնդիրը լուծվում է մեծ
հաջողությամբ: Մոսեներգոն, Դոնեներգոն, Ուբալեներգոն և
յերկրի մյուս եներգոսխտեմներն արդեն այնքան են աճել, վոր
նրանց միացումը մի միասնական բարձրավոլտ ցանցի մեջ—ամե-
նամոտ ապագայի գործ է: Մեծ Վոլգայի սխտեմի հիդրոէլեկտրա-
ների շինարարությունն իրենից նույնպես ներկայացնում է միաս-
նական բարձրավոլտ ցանցի մի ողակը: Միասնական բարձրավոլտ
ցանցի մեջ մացրած այդ հիդրոէլեկտրոստաններն եննրգիա կտան ԽՍՀՄ
Ցեվրոպական մասի վողջ տերիտորիայի ձևանարկություններին
և այլ սպառողներին: Ինչպիսի՞ հրապուրիչ մոտիկ հեռանկարներ
է բացում այդ ողակի կայաններից մեկի—Կույբիչեվի հիդրո-
հանգույցի կառուցումը: Տուբրինների և ելեկտրո-դեններատոր-
ների հզորությունը, վորոնք պետք է զրվեն Կույբիչեվի հիդ-

րոհանգույցի հիդրոկայաններում, կհասնի 150—200 հազար կիլոմետրի: Ամերիկացիները կողմից 1937 թ. ավարտված, իր հզորությամբ և ելեկտրոններգիայի հազորդման հեռավորություններ աշխարհում ամենամեծ Բոլդեր—Լոս-Անժելոսը հաղորդում է 235 մեգավատտ 430 կիլոմետր տարածություն վրա: Կույրիչևսկի հիդրոհանգույցը պետք է հազորդի 1800 մեգավատտ 900 կիլոմետր տարածության վրա—Մոսկվային, 700 կիլոմետր տարածության վրա—Ջլատոուստին և յերկրի շատ ուրիշ կետերի:

Ամբողջ աշխարհում աղմուկ հանեց ածուխի ստորերկրյա գազիֆիկացիայի գաղափարը, վորն առաջին անգամ արտահայտեց ռուս հանճարեղ գիտնական Գ. Ի. Մենդելեևսկը, իսկ այնուհետև անգլիական ակադեմիկոս Ջիմիկոս Վիլյամ Ռամսեյը:

«Այդ հայտնագործությունը արդյունաբերության մեջ առաջնապես հեղաշրջումը վիթխարի կլինի»¹,—գրում էր Լենինը:

Բայց կապիտալիզմն ի վիճակի չէ կենսագործելու այդ գաղափարը:

Ածուխի ստորերկրյա գազիֆիկացիայի գաղափարը կարող է կենսագործվել միայն սոցիալիզմի ժամանակ, և այն իրոք հաջողությամբ կենսագործվում է մեր սոցիալիստական յերկրում:

1938 թ. փետրվարին առաջին արդյունաբերական կայանն Ուկրաինայում սկսեց գազ տալ սպառողներին:

Գրանդիոզ հիդրոտեխնիկական շինարարությունը, ածուխի ստորերկրյա գազիֆիկացիայի պրոբլեմը, նորագույն տեսակի մեքենաներ ստեղծելը, յերկրում արդյունաբերության ամենաառաջավոր ճյուղերը զարգացնելը, մեր յերկրում իրագործվող տասնյակ ու հարյուրավոր տեխնիկական հանգույցն գաղափարները,—տեխնիկայի հզոր ծաղկման այս բոլոր ցուցանիշները հատուկ են միայն սոցիալիզմի յերկրին:

Բայց յեթե մենք շատ բան ձեռք ենք բերել, ապա նմանապես պարզ է, վոր շատ բան էլ դեռևս ձեռք չենք բերել և այն խնդիրները, վորոնք ծառացած են մեր առջև հետագա տեխնիկական պրոգրեսի բնագավառում, ավելի ևս դրանդիոզ են:

Յերբորդ հնգամյակում արդյունաբերությունը պետք է անշեղորեն առաջ շարժվի տեխնիկական պրոգրեսի ճանապարհով:

Ածուխի արդյունաբերության մեջ յերբորդ հնգամյակում

ավարտվում է ածուխի հանույթի կոմպլեքսային մեքենայացումը:

Նավթի արդյունաբերության մեջ պետք է յուրացվեն նավթի հանույթի ամենաառաջավոր մեթոդները—հորատման պտուտական յեղանակը, հորատում տուրբոբուրով, կոմպլեքսորով և նասոսով դեանի խորքից կատարվող հանույթը և այլն:

Ելեկտրոտնտեսությունը զարգանում է մեծ ճանաչաներ, բարձր ջերմաստիճաններ և բարձր լարումներ յուրացնելու ճանապարհով:

Տեքստիլ արդյունաբերության մեջ յերբորդ հնգամյակի տարիներում արմատանում են մեծ արագություն ունեցող և միապրոցես մեքենաներ, բարձր վիտյափաների պրիբորներ, ինչպես և իրագործվում է մանվածքային արտադրության ավտոմատիզացիան:

Արտադրության մասշտաբների խիստ աճումն արդյունաբերության բոլոր ճյուղերում, արտադրության տեխնիկական հետագա կատարելագործումը գիտություն ու տեխնիկայի նորագույն նվաճումների բազայի վրա, ինչպես և մասսայական ստալիստիկայի շարժման հիման վրա ստալիստիկայի ռացիոնալիզատորական արժեքավոր առաջարկների ու գյուտերի իրացումը, հումքի, վառելիքի, արտադրության բոլոր անսպառ ռեզերվների ողտագործման վճարական բարելավումը—ահա արդյունաբերության զարգացման հիմնական ուղղությունները յերբորդ հնգամյակում:

«Յերբորդ հնգամյա պլանը,—ասաց ընկեր Մոլոտովը Համկ(բ)Կ XVIII համագումարում,—յերկրորդ և առաջին հնգամյակի շարունակությունն է: Նրա հիմքում դրված է բոլշևիկյան միենույն գլխավոր դժի հետագա զարգացումը: Նրանում հետևողականորեն անց է կացվում ԽՍՀՄ հետագա ինդուստրացման գիծը, վորը հանդիսանում է մեր նախորդ տնտեսական հաջողությունների հիմքը և ժողովրդական տնտեսության հետագա, ել ավելի հուսկու վերելքի յերաշխիքը»:

Սոցիալիստական հասարակության կառուցման ժամանակ կոմունիստական կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը և վոչ մի բոլակ չէյին թուլացնում պայքարը աշխատանքի արտադրողականության անչեղ վերելքի համար: Այս իմաստով առանձնապես նշանակալից են ստալինյան յերկու հնգամյակների հան-

¹ Ленин, т. XVI, стр. 369.

բազում մարմինները, հնգամյակներ, վերոնց ընթացքում մենք հաջողությամբ կատարեցինք ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումն ավարտելու խնդիրը—յերկրորդ հնգամյակի այդ վճռական և զլխավոր տնտեսական խնդիրը: Հենց դրա շնորհիվ էլ մենք կարողացանք գլուզում ստեղծել կոլտնտեսային կարգի համար նյութական տեխնիկական բազա:

Սոբորգային կառավարության գլուխ ընկեր Մոլոտովը Համ. կ(բ) Կ XVIII համագումարին տված իր հիանալի զեկուցման մեջ բերեց այնպիսի փայլուն թվեր ու փաստեր, վերոնք ցույց են տալիս, թե յերկու հնգամյակներին տարիներին ինչպիսի հաջողությամբ և կատարված յերկրի ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումն ավարտելու խնդիրը:

«Յերկրորդ հնգամյակի ընթացքում,—ասում էր ընկեր Մոլոտովն,—արմատապես նորացվեց արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրական-տեխնիկական ապարատը: Առաջին և յերկրորդ հնգամյակների ընթացքում կառուցված կամ ամրոցված վերակառուցված նոր ձեռնարկություններից 1937 թվականին ստացվեց արդյունաբերական ամրոց արտադրանքի ավելի քան 80 տոկոսը: Գյուղատնտեսության մեջ գործող բոլոր արակտորների ու կոմբայնների մոտ 90 տոկոսը խորհրդային արդյունաբերությունն արտադրել է յերկրորդ հնգամյակում: Մեքենաշինության ու մեքանաշինական արտադրանքն ավելացավ վոչ թե յերկու անգամից մի փոքր ավելի, ինչպես նշված էր ըստ յերկրորդ հնգամյակի, այլ համարյա յերեք անգամ: Դադրյալների՝ առ 1-ն հունվարի 1938 թվականի առկա պարկի ավելի քան 50 տոկոսն արտադրվել է յերկրորդ հնգամյակի տարիներում: Ամրոց արդյունաբերության մեջ բանվորի զինվածությունը երկարոսներգիայով 2·100 կիլոգրամ-ժամից հասել է 4·370 կիլոգրամ-ժամի: Հիմնականում լուծված է արդյունաբերության այնպիսի աշխատողնալ ու ծանր պրոցեսները մեքենայացնելու խնդիրը, ինչպես ածուխ հատելը, նավթի ու տորֆի արդյունահանումը, ձկնորսության մեքենայացումը և այլն:

Յերկրորդ հնգամյակի պլանի համաձայն՝ արդյունաբերության արտադրանքը 43 միլիարդ ուռլուց պետք է հասներ մինչև 93 միլիարդ ուռլու, իսկ իրոք 1937 թվականին արդյունաբերության արտադրանքը հասավ 96 միլիարդ ուռլու:

Յերկրորդ հնգամյակի պլանի համաձայն՝ մեր արդյունաբերության արտադրանքը պետք է ավելանար 115 տոկոսով, բայց իրոք այն աճեց 121 տոկոսով: Արդեն մինչև 1937 թվականի ապրիլի 1-ը, այսինքն արդեն չորս տարի և յերեք ամսվա ընթացքում, արդյունաբերությունը հասավ այն մակարդակին, վերը սահմանվել էր յերկրորդ հնգամյակի վերջին տարվա համար: Այդպիսով, արդյունաբերությունը յերկրորդ հնգամյակը կատարեց ժամկետից շուտ»:

Աշխատանքի բարձր արտադրողականության համար մղվող պայքարում մեր յերկրի ձեռք բերած պատմական հաղթանակները հիմք հանդիսացան ժողովրդական բարեկեցության և աշխատավորների կուլտուրական մակարդակի բարձրացման համար: Շնորհիվ աշխատանքի արտադրողականության համար մղած անընդ պայքարի մենք հասանք այն բանին, վոր յերկրորդ հնգամյակի տարիներում աշխատավարձի ֆոնդն ամրոցվ ժողովրդական տնտեսության բնագավառում այդ ժամանակի ընթացքում ավելացավ 2,5 անգամ և բանվորների ու աշխատավարձը յերկրորդ հնգամյակի ընթացքում ավելացավ կրկնակի չափով: Յեւ այդ ամենն այն միջոցին, յերբ բանվորների և ծառայողների թիվն աճել է 18 տոկոսով:

Աշխատանքի արտադրողականության բարձրացման համար մղվող պայքարում ձեռք բերած մեր հաջողությունները թույլ տվեցին զգալի չափով ավելացնել պետական ծախսերը քաղաքի ու գյուղի կուլտուրական սպասարկման վրա, զգալի չափով ավելացնել ծախսերը լուսավորության, առողջապահության, ֆիզկուլտուրայի ու սոցիալական ապահովության բնագավառում: Պետական սոցիալական ապահովագրության ուղղությամբ կատարվող ծախսերը 1932 թ. 8,3 միլիարդ ուռլուց 1937 թ. աճեցին և հասան 30,8 միլիարդ ուռլու, այսինքն՝ 3,7 անգամ: Յերկրորդ հնգամյակի տարիներում աշխատավորության բնակարանային-կենցաղային պայմանների բարելավման և կոմունալ տնտեսության վրա պետության արած ծախսերի աճումը բնութագրելու համար, բավական է ասել, վոր այդ ժամանակի ընթացքում մատնանշված կարիքների վրա ծախսվել է 16,3 միլիարդ ուռլու: Զորս տարվա ընթացքում, այսինքն 1934-ից մինչև 1937 թ., կոլտնտեսականների համախառն յեկամուտն ավելացավ ավելի քան 2,7 անգամ, իսկ զրամական յեկամուտները, վորոնք բաշխ-

վում են կոլտնտեսականների միջև ըստ աշխուրհի, այդ չորս տարվա ընթացքում ավելացան ավելի քան 4,5 անգամ: Ի՞նչը կարող է այս թվերից ավելի վառ կերպով վկայել Խորհրդային Միության աշխատավորութայն լայն մասսաների ունեւորութայն բուռն աճման մասին:

Չնայած լայն սպառման առարկաների արտադրութայն ավելանալուն, այդ արտադրութայնն ամենևին էլ կարողանում բավարարել բնակչութայն պահանջը: Իսկ չէ՞ վոր լայն սպառման մի շարք կարևորագույն մթերքների ու շինվածքների դեմ մենք 1932 թ. համեմատութայն 1937 թ. հասանք լայն սպառման առարկաների արտադրութայն վոչ միայն կրկնապատկանք, այլև յեռապատկանք:

Բնական է, վոր հենց այդ հիման վրա էլ կարող եր ծնվել և լայն կերպով տարածվել ստախանովյան շարժումը՝ հանուն աշխատանքի ե՛լ ավելի բարձր արտադրողականութայն:

Ընկեր Ստալինը ստախանովյան շարժումն անվանեց «մեր ժամանակի անհաղթահարելի շարժում»: Ժողովրդական մասսաների խորքից աճած ստախանովյան շարժումը բոլշևիկների կուսակցութայն և ԽՍՀՄ բանվոր դասակարգի՝ սոցիալիզմի համար մղած համառ, տևական ու պլանաչափ պայքարի հետևանք հանդիսացավ: Նա մասսաների շարժումը դարձավ շնորհիվ այն բանի, վոր մենք հաղթահարեցինք մեր յերկրի տնտեսական հետամնացութայնը, դարձնելով այն առաջավոր, նորագույն տեխնիկայով զինված յերկիր, շնորհիվ այն բանի, վոր մենք լիկվիդացիայի յենթարկեցինք կապիտալիստական դասակարգերը, լիկվիդացիայի յենթարկեցինք մարդու շահագործումը մարդու կողմից և կենսագործեցինք սոցիալիզմը:

Ստախանովյան շարժումը հետևանք է այն բանի, վոր ԽՍՀՄ մեջ այլ վերաբերմունք է ստեղծված դեպի աշխատանքը, աշխատանքը մարդու համար դարձարել է ծանր բեռ ու նզովք լինելուց և դարձել է պատվի, փառքի, արիութայն ու հերոսութայն գործ: Աշխատավոր մարդը ԽՍՀՄ մեջ բարձրացվել և հասցվել է չտեսնված բարձրութայն: Աճել են տեխնիկային տիրապետած խորհրդային նոր կադրեր: Սոցիալիզմի կենսագործումը հասցրել է աշխատավոր մասսաների նյութական դրութայն արմատական բարելավմանը:

Բնութագրելով մեր յերկրում ստախանովյան շարժմանը ծնունդ տվող և առաջ մղող պայմանները, ընկեր Ստալինը Ստա-

խանովականների Համամիութենական առաջին խորհրդակցութայնն արտասանած իր պատմական ճառում ասաց, վոր ստախանովյան շարժման հիմք ծառայեց ամենից առաջ բանվորների նյութական դրութայն արմատական բարելավումը, վոր ստախանովյան շարժման մյուս աղբյուրը մեզ մոտ շահագործման բացակայութայնն է, վոր մեզ մոտ ստախանովյան շարժման աղբյուրներ են հանդիսանում նոր տեխնիկայի առկայութայնը և բանվորների ու բանվորուհիների այնպիսի կադրերի աճումը, վորոնք ընդունակ են այդ նոր տեխնիկան գլխավորելու և առաջ մղելու:

Ստախանովյան շարժումը հանդիսացավ մասսաների սոցիալիստական մրցակցութայն մասին լեհիյան գաղափարի փայլուն մարմնացումը: Սոցիալիստական մրցակցութայն բարձրագույն ձև հանդիսացող այս շարժման մեջ մարմնացած են լեհիյան պրոգնոզներն այն մասին, վոր կոմունիզմն սկսվում է այնտեղ, վորտեղ յերևան է դալիս շարքային բանվորների անձնվեր հոգացողութայնն աշխատանքի արտադրողականութայնն ավելացնելու մասին:

«Մի՞թե պարզ չէ,—ասում եր ընկեր Ստալինը Ստախանովականների Համամիութենական առաջին խորհրդակցութայնը,—վոր ստախանովականները հանդիսանում են նորարարներ մեր արդյունաբերութայն մեջ, վոր ստախանովյան շարժումը ներկայացնում է մեր ինդուստրիայի ապագան, վոր այն պարունակում է բանվոր դասակարգի ապագա կուլտուր—տեխնիկական վերելքի սերմը, վոր նա մեր առաջ բաց է անում այն ուղին, վորով միայն կարելի յէ հասնել աշխատանքի արտադրողականութայն այն բարձրագույն ցուցանիշներին, վորոնք անհրաժեշտ են սոցիալիզմից կոմունիզմին անցնելու և մտավոր աշխատանքի ու ֆիզիկական աշխատանքի հակադրութայնը վոչնչացնելու համար»:

Խորհրդային ժողովուրդը, վորին ղեկավարում է Լենինի գործի հանձարեղ շարունակող Ստալինը, կառուցել է սոցիալիստական հասարակութայն: Սոցիալիզմի կառուցման համար մղվող պատմական պայքարում մերկացվեցին և ջախջախվեցին ժողովրդի ստոր թշնամիները—տրոցկիստական—բուխարինական և այլ ճիվաղները, վորոնք փորձում էին պատմութայն շարժումը հետ դարձնել, վոչնչացնել Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հե-

դափնիստության նվաճումները: Թշնամիները խաղաթղթերը խառնելիցին: Բոլշևիկյան կուսակցության ղեկավարած խորհրդային ժողովուրդը նրանց թշնամական բները քարուքանդ արեց: Խորհրդային բոլոր կազմակերպությունները վնասարարներից, մարդասպաններից, լրտեսներից ու դավաճաններից մաքրելը բերեց—հասցրեց մեր բոլոր կազմակերպությունների հետագա ամրապնդմանը, ԽՍՀՄ տնտեսական ու կուլտուրական հետագա ծաղկմանը, մեր հայրենիքի պաշտպանական հզորության բարձրացմանը:

Բոլշևիկները յերբեք չեն հանդստանում ձեռք բերած հաջողություններով, վորքան ել այդ հաջողությունները մեծ լինեն: Այդ և անդուլ սովորեցնում է նրանք գործի մեծ շարունակողը—մեր առաջնորդն ու ուսուցիչը, մեր Ստալինը:

Չնայած վոր ԽՍՀ Միության բոլոր հանրապետություններում մենք ձեռք ենք բերել այդքան զգալի հաջողություններ ինդուստրացիայի գործում, բնակչության նյութական-կուլտուրական մակարդակի բարձրացման, ձեռք ազգային, բովանդակությունը սոցիալիստական կուլտուրաների բարձրացման գործում, չնայած մեր արդյունաբերության զարգացման ունկրդային տեմպերին, չնայած վոր արտադրության տեխնիկայի տեսակետից մենք առաջ ենք անցել կապիտալիստական առաջավոր յերկրներից, մենք դեռ չենք հասել կապիտալիստական ամենից ավելի զարգացած յերկրներին տնտեսական տեսակետից: Այդ բացատրություն մե նրանով, վոր անցյալում, մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունը, մեր յերկիրը տնտեսական տեսակետից ծայր աստիճան հետամնաց յերկիր էր, և դեռ այժմ ել արդյունաբերության զարգացման մակարդակը, այդ արդյունաբերության՝ բնակչության մեկ շնչին ընկնող պրոդուկցիայի արտադրության իմաստով ավելի ցածր է, այն ել զգալիորեն ավելի ցածր, քան Յեվրոպայի և ԱՄՆ-ի՝ տեխնիկա-տնտեսական տեսակետից ամենից ավելի զարգացած յերկրներում:

Համկ(բ) XVIII համագումարի բանաձևերում ասվում է, թե

«... մեր յերկրում բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնում է զգալիորեն ավելի քիչ արդյունաբերական արտադրանք, քան այնպիսի յերկրներում, ինչպես Ամերիկայի Միացյալ Նահանգները, Անգլիան, Գերմանիան, Ֆրանսիան: Այսպես, որինակ, յերկրորդ հնգամյակի վերջին ԽՍՀՄ մեջ բնակչության յուրաքանչյուր շնչին ընկ-

նում էր՝ ելեկտրոնեղիս 2 անգամից ավելի պակաս, քան Ֆրանսիայում, մոտ 3 անգամ պակաս, քան Անգլիայում, 3,5 անգամ պակաս, քան Գերմանիայում, 5,5 անգամ պակաս, քան ԱՄՆ-ում. չուգում—2 անգամից ավելի պակաս, քան Անգլիայում ու Ֆրանսիայում, 2,5 անգամ պակաս, քան Գերմանիայում, 3 անգամ պակաս, քան ԱՄՆ-ում. պողպատ ընկնում էր համարյա 2 անգամ պակաս, քան Ֆրանսիայում, համարյա 3 անգամ պակաս, քան Անգլիայում ու Գերմանիայում, համարյա 4 անգամ պակաս, քան ԱՄՆ-ում. քարածուխ ԽՍՀՄ մեջ բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնում էր մի փոքր պակաս, քան Ֆրանսիայում և զգալիորեն պակաս, քան ԱՄՆ-ում, Անգլիայում ու Գերմանիայում:

ԽՍՀՄ-ն բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնող արտադրանքի չափերի տեսակետից դեռևս հետ է մնում նաև արդյունաբերական այնպիսի ապրանքների դեմով, ինչպես գործվածքները, թուղթը, ոճառը և միքանի այլ ապրանքներ:

Տեխնիկա-տնտեսական տեսակետից առավել զարգացած կապիտալիստական յերկրների համեմատությամբ ԽՍՀՄ արդյունաբերական արտադրանքի չափերի այս անբավարարությունը պետք է լիովին վերացվի, վորպեսզի ապահովվի կոմունիզմի վերջնական հաջողությունը կապիտալիզմի հետ նրա ունեցած պատմական մրցության ասպարեզում»:

Աշխատանքի արտադրողականության անչեղ բարձրացման համար միջոց պայքարը պետք է խաղա և խաղալու յե գլխավոր դերը ԽՍՀՄ այս հիմնական տնտեսական խնդրի լուծման մեջ—10—15 տարվա ընթացքում հասնել և առաջ անցնել Յեվրոպայի և ԱՄՆ-ի տեխնիկական տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկրներից նույնպես և տնտեսական տեսակետից:

Համկ(բ) XVIII համագումարում ընկեր Ստալինն ասում էր.

«Կապիտալիստական գլխավոր յերկրներից տնտեսապես անցնելու համար պահանջվում է ժամանակ, այն ել վոչ փոքր ժամանակ: Յեվ մեզ մոտ վորքան ավելի բարձր լինի աշխատանքի արտադրողականությունը, վորքան ավելի կատարելագործվի մեզ մոտ արտադրության տեխնիկան, այնքան ավելի շուտ կարելի կլինի կատարել այդ տնտեսական

2456
40



կարևորագույն խնդիրը, այնքան ավելի կարելի կլինի
կրճատել այդ խնդրի կատարման ժամկետները»:

Արդյունաբերություն և գյուղատնտեսություն արտադրության
տեխնիկայի մակարդակի տեսակետից խՍՀՄ այժմ Յեվրոպայի
յուրաքանչյուր կապիտալիստական յերկրից առաջ է կանգնած:

Մեր սոցիալիստական կարգերի, վորպես կապիտալիզմի հա-
մեմատություն ավելի բարձր կարգերի ունեցած առավելու-
թյունները, մեր պլանային տնտեսությունը, բնության մեծա-
գույն հարստությունները վորքան կարելի յե լրիվ կերպով ոգ-
տագործելու մեր հնարավորությունները յերաշխիք են, վոր
մենք տեխնիկայի ու եկոնոմիկայի բոլոր բնագավառներում
կգրավենք աշխարհումս առաջին տեղը: Արդի իրադրությունը
բնութագրվում է վորպես կապիտալիստական ընդհանուր ճգ-
նաժամի եպոխտ: Յեթե կապիտալիստական յերկրներն ամբող-
ջությամբ առած կարողացան տնտեսություն մինչպատերազմյան
մակարդակը գերազանցել միայն միքանի տասնյակ տոկոսներով,
ապա մեր յերկրում շնորհիվ սոցիալիստական կարգերի առավել-
ությունների, արդյունաբերական արտադրանքը 1938 թվին
մինչպատերազմյան մակարդակը գերազանցեց ինն անգամ:

Կապիտալիզմի ամենաառաջավոր յերկրից՝ Ամերիկայի Միա-
ցյալ Նահանգներից տնտեսական տեսակետից՝ անցնելու համար մենք
պետք է մեր արդյունաբերությունը, նրա արտադրությունը
բարձրացնենք մոտավորապես 3—4 անգամ: Այդ հիմքի վրան-
դիող մասշտաբների խնդիրը միանգամայն իրադործելի յե, քանի
վոր ամսան տեմպերը, զարգացման տեմպերը մեզ մոտ՝ սոցիա-
լիզմի յերկրում շատ ավելի գերազանցում են ամենաառաջավոր
կապիտալիստական յերկրի աճման տեմպերից: 1928 թ., որի-
նակ, ԱՄՆ-ում բնակչության մեկ չնչին արդյունահանում էր
ածուխ 15 անգամ ավելի, քան մեզ մոտ, իսկ այժմ՝ միայն 4,5
անգամ ավելի, տասը տարի սրանից առաջ ԱՄՆ-ում չուզուին 15
անգամ ավելի յեր ձուլվում, քան խՍՀՄ մեջ, իսկ այժմ՝ միայն
յերեք անգամ: Այս թվերից յերևում է, վոր զարգացման տեմ-
պերը մեզ մոտ գգալիորեն ավելի բարձր են, քան կապիտալիս-
տական գլխավոր յերկրներում, բայց վոչ մի բոպե չպետք է մո-
ռանալ, վոր մեր ինդուստրիայի սարքավորումն իր ծավալով
գեո ավելի փոքր է, քան ԱՄՆ-ինը: Այսպես, որինակ, ԱՄՆ-ի
արդյունաբերության մեջ կա մոտ 50 միլիոն ձիու ուժ, իսկ մեզ
մոտ—մոտ 15 միլիոն: Այս որինակը բավարար չափով խոսում է

այն մասին, թե վորքան լուրջ է ԱՄՆ-ից տնտեսական տեսակե-
տից անցնելու խնդիրը, թե վորքան յեռանդուն կերպով պետք է
աշխատենք, վորպեսզի իրադործենք այդ խնդիրը:

«Ի՞նչ է պահանջվում, —ասում էր ընկեր Ստալինը
Համկ(բ)Կ XVIII համագումարին արած իր գեկուցման
մեջ, —կապիտալիստական գլխավոր յերկրներից տնտեսա-
պես անցնելու համար: Դրա համար պահանջվում է, նախ,
առաջ գնալու լուրջ ու անդուսպ ցանկություն և զոհողու-
թյունների դիմելու, մեր սոցիալիստական արդյունաբե-
րությունն ամեն կերպ ընդլայնելու համար լուրջ կապի-
տալ ներդրումների դիմելու պատրաստակամություն:
Մենք ունենք արդյոք այդ տվյալները: Անպայման
ուներենք: Դրա համար պահանջվում է, այնուհետև, ար-
տադրության բարձր տեխնիկայի և արդյունաբերության
զարգացման բարձր տեմպերի առկայություն: Մենք
ուներենք արդյոք այդ տվյալները: Անպայման ուներենք: Դրա
համար պահանջվում է, վերջապես, ժամանակ: Այո, ըն-
կերներ, ժամանակ: Հարկավոր է կառուցել նոր գործա-
րաններ: Հարկավոր է նոր կադրեր կոփել արդյունաբերու-
թյան համար: Բայց դրա համար անհրաժեշտ է ժամա-
նակ, և այն ել վոչ փոքր»:

Յերրորդ հնգամյակի պլանում նախատեսվում է աշխատան-
քի արտադրողականության հետագա վերելք՝ արդյունաբերու-
թյան մեջ 65 տոկոսով, շինարարության մեջ—75 տոկոսով:
Հարկավոր է հաշվի առնել, վոր այդ տոկոսներից յուրաքանչյու-
րի հետևում ծածկված է արտադրանքի վիթխարի ծավալ: Ար-
տադրանքի վերելքի յուրաքանչյուր տոկոս տալիս է գրեթե մեկ
միլիարդ ռուբլու արտադրանքի ան, մինչդեռ յերկրորդ հնգա-
մյակում աշխատանքի արտադրողականության յուրաքանչյուր տո-
կոսը տալիս էր մոտ 400 միլիոն ռուբլու արտադրանքի աճ, իսկ
առաջին հնգամյակում—մոտ 200 միլիոն ռուբլու:

Ահա այս է աշխատանքի արտադրողականության բնագավա-
ռում յեղած համաշխարհային-պատմական այն խնդիրը, վորն
այժմ կանգնած է խորհրդային Միության մեծ Ժողովրդի առաջ:
Խնդիրը զբանդիող է, բայց մեր սոցիալիստական կարգերի ան-
սպառ հնարավորությունները, խորհրդային յերկրի քաղաքացինե-
րի բարոյա-քաղաքական միասնությունը, կոմունիզմի և Ժողո-
վրդի միաձուլվելը և մի ամբողջություն կազմելը—անսասան:

Հիմք ստեղծեցին այդ պատմական խնդիրը լուծելու համար: Հարցն այն է, վոր արդյունաբերությունյան և գյուղատնտեսության յուրաքանչյուր ճյուղում նշենք այդ պրոբլեմի լուծման կոնկրետ ուղիները: Հարցն այն է, վոր յուրաքանչյուր դործարանում, յուրաքանչյուր ֆաբրիկայում, յուրաքանչյուր կոլտնտեսությունում խորհտնտեսության մեջ գտնվեն տվյալ ձեռնարկության համար ավելի արագ, ավելի ճիշտ կոնկրետ ուղիներ՝ աշխատանքի արտադրողականությունը վորքան կարելի չե շատ բարձրացնելու մեր արտադրանքի վորակը լայնացնելու համար:

Աշխատանքի արտադրողականության հետագա վերելքի համար միջվող այն պայքարը, վորը հիմնվում է արտադրության տեխնիկայի կատարելագործման, մեր յերկրի ռեզերվների, բնական անապառ հարստությունների մորիլիզացիայի վրա, բացառիկ նշանակություն է ստանում ԽՍՀՄ հիմնական տնտեսական խնդիրը վորքան կարելի չե արագ լուծելու ասպարեզում:

XVIII համագումարում, բացատրելով կուսակցության հետագա խնդիրները ներքին քաղաքականության բնագավառում, բնկեր Ստալինը մատնանշեց անհրաժեշտությունն, ամենից առաջ՝

«Ն՛լ ավելի ծավալելու մեր արդյունաբերության վերելքը, աշխատանքի արտադրողականության աճումը, արտադրության տեխնիկայի կատարելագործումը, վորպեսզի այն բանից հետո, յերբ արդեն գլխավոր կապիտալիստական յերկրներից առաջ ենք անցել արտադրության տեխնիկայի և արդյունաբերության աճման տեմպերի բնագավառում, — նրանից նաև տնտեսապես առաջ անցնենք մոտակա 10—15 տարիների ընթացքում»:

II. ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՇԱՐԺՈՒՄԸ

Քսան տարի առաջ, 1919 թ. հունիսի 28-ին, Վլադիմիր Իլյիչ Լենինը «Մեծ նախաձեռնություն» պատմական աշխատության մեջ հանձարեղորեն բնութագրեց կոմունիստական շաբաթորյակները, վորպես «կոմունիզմի փաստական սկիզբ», վորպես պատմական հեղաշրջման սկիզբ՝ դեպի աշխատանքը յեղած վերաբերմունքի մեջ: 1919 թ. մայիսի 10-ին Մոսկվայում, Մոսկվա—Կազան (այժմ Լենինյան) յերկաթուղու վրա կազմակերպված կոմունիստական առաջին շաբաթորյակը Վլադիմիր Իլյիչ Լենինն արդեն այն ժամանակ համարեց մեծ նախաձեռնություն, աշխատանքի նկատմամբ նոր, կոմունիստական վերաբերմունքի

ծիլեր, խորաթափանցորեն համարեց սոցիալիստական մրցակցության ապագա հզոր հեղեղ:

«Մեծ բեկման տարում», տաս տարի անց, Համկ(բ)կ Համաթիութենական XVI կոնֆերենցիայի կոչով ամբողջ յերկրում սկսվեց սոցիալիստական մրցակցություն, սկսվեց միլիոնավոր մասսաների աշխատանքային փոխականչը (перекличка): Սոցիալիստական մրցակցությունը դարձավ իրոք մասսայական, ժողովրդական շարժում:

Ինչպես Լենինը ի դեմս շաբաթորյակների վողջունեց կոմունիզմի առաջին ծիլերը, այնպես էլ ընկեր Ստալինը վողջունեց սոցիալիզմի Փունդամենտի հիմնադրմանը ձեռք զարկած բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաների հզոր աշխատանքային վերելքն ու ստեղծագործ նախաձեռնությունը:

1935 թ. ոգոստոսի 30-ից լույս 31-ի գիշերը «Յենտրաչնայա-Իրմինո» հանքահորի ածխահատ Ալեքսեյ Ստախանովը 6 ժամվա ընթացքում կտրեց 102 տոնն ածուխ, սահմանելով մինչև այդ չտեսնված ռեկորդ:

Ալեքսեյ Ստախանովի հորատող մուրճի հարվածն աղդարարեց ամբողջ աշխարհին խորհրդային յերկրում սոցիալիստական մրցակցության նոր ետապի սկզբնավորության մասին: Դոնի հանքափորի նախաձեռնությունը սոցիալիստական մրցակցության բարձրագույն ձևին՝ ստախանովյան շարժմանն անցնելու սկիզբ հանդիսացավ:

«Ստախանովյան շարժումը, — ասաց ընկեր Ստալինը Ստախանովականների Համաթիութենական առաջին խորհուրդակցությանը, — չի կարելի դիտել վորպես բանվորների ու բանվորուհիների սովորական շարժում: Ստախանովյան շարժումը բանվորների ու բանվորուհիների մի այնպիսի շարժում է, վորը մեր սոցիալիստական շինարարության պատմության մեջ կմտնի վորպես նրա ամենափառավոր եջերից մեկը»:

Առաջտորդի այս խոսքերն արտասանվելու օրից անցած ժամանակի ընթացքում ստախանովյան շարժումը հզոր հեղեղով տարածվեց ամբողջ յերկրով մեկ: Ինդուստրիայի բոլոր ճյուղերը, մեր ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառները ընդգրկված են ստախանովյան շարժմամբ, վորը փչրում է տեխնիկայի մասին յեղած հին հայացքները, տեխնիկական հին նորմաները, նախադժային հին կարողությունները, արտադրական հին պլանները:

«...ստախանովյան շարժումը,—ասաց ընկեր Ստալինը,—վորսին սոցիալիստական մրցակցության արտահայտություն, նպաստավոր կերպով տարբերվում է սոցիալիստական մրցակցության հին ետապից: Անցյալում, մոտ յերեք տարի առաջ, սոցիալիստական մրցակցության առաջին ետապի շրջանում, սոցիալիստական մրցակցությունն անսպաժման չէր կապված նոր տեխնիկայի հետ: Ասենք՝ այն ժամանակ մեզ մոտ, իսկապես, համարյա չկար ել նոր տեխնիկա: Իսկ սոցիալիստական մրցակցության ներկա ետապը—ստախանովյան շարժումը, ընդհակառակը, անսպաժման կապված է նոր տեխնիկայի հետ: Ստախանովյան շարժումն աներևակայելի կլիներ առանց նոր, ավելի բարձր տեխնիկայի»:

Ստախանովյան շարժումն իրենով արտահայտում է նոր, ավելի բարձր տեխնիկական նորմաներ և ներկայացնում է աշխատանքի բարձր արտադրողականության մոտ, վորը կարող է տալ միայն սոցիալիզմը և վորը կապիտալիզմը տալ չի կարող: Համաժողովրդական այս շարժումը մեր յերկրում նախապատրաստվել է սոցիալիզմի համար մղվող պատմական պայքարում ձեռք բերված հաջողություններով: Ստախանովյան շարժումը կոչված է հեղաշրջում առաջ բերելու մեր արդյունաբերության մեջ: Ստախանովականները ստալինյան եպիսայի մարդիկ են, վորոնք անսահմանորեն սիրում են իրենց սոցիալիստական հայրենիքը և ձգտում են բազմապատկելու նրա հարստությունները: Բնորոշելով ստախանովյան շարժման նշանակութունը, ընկեր Ստալինն ասաց, վոր «նա պայմաններ է նախապատրաստում սոցիալիզմից կոմունիզմին անցնելու համար»:

Ընկեր Ստալինն անդադար սովորեցնում է մեզ, վոր ստախանովյան շարժումը հարկավոր է ղեկավարել, ղեկավարել հմտորեն, ղեկավարել կոնկրետ կերպով: Ամեն ոք մենք տեսնում ենք, թե ինչպես, իրար հետ մրցակցելով, մեր գործարաններն ու ֆարբիկաները, հանքահորերն ու յերկաթուղիները, կոլտնտեսություններն ու խորհատեսություններն աշխատանքի ստախանովյան արտադրողականության զարմանալի նմուշներ են ցուցաբերում, իջեցնում են արտադրանքի ինքնարժեքը, ժամկետից շուտ են կատարում պլանային առաջադրանքները: Ստալինյան Յերրորդ Հնգամյակի անվան սոցիալիստական մրցակցության դրոշի տակ մեր յերկրը յուրաքանչյուր ոք նորանոր հաղթանակներ է

տանում աշխատանքի բարձր արտադրողականության համար մղած պայքարում: Յեվ ամեն մի առանձին ղեկավար հաջողությունն անմիջական հետևանք է ստախանովյան շարժման ձիւղ ղեկավարության:

Ստախանովյան շարժումը փայլուն ապացույցն է այն բանի, վոր տնտեսության սոցիալիստական սխտեմը թույլ է տալիս ամեն մի առանձին ձեռնարկության, ամեն մի առանձին բանվորի հաջողությունը դարձնել մասսաների սեփականություն: Վլադիմիր Իլյիչ Լենինը, կազմակերպելով կոմունիստական առաջին շարաթորյակները, յերազում էր այնպիսի ժամանակների մասին, յերբ սոցիալիստական մրցակցության բոցը կընդգրկէ ամբողջ յերկիրը և առաջավոր բանվորներին, մեր սոցիալիստական ինտելիգենցիայի առաջավոր ներկայացուցիչներին նվաճումները մասսաների սեփականություն կդառնան: Իրականացել են Վլադիմիր Իլյիչի մարդարեայական խոսքերը, վորն ասում էր.

«Որինակի ուժը, վորը չկարողացավ արտահայտվել կապիտալիստական հասարակության մեջ, վիթխարի նշանակութուն կստանա այն հասարակության մեջ, վորը վերացրել է հողի և գործարանների մասնավոր սեփականությունը—վոչ միայն այն պատճառով, վոր այստեղ, գուցե, հետեւելու յեն լավ որինակին, այլև այն պատճառով, վոր արտադրության կազմակերպման լավագույն որինակը գոգորդվելու յե աշխատանքի անխուսափելի թեթեւացման և սպառման դուժարի մեծացման հետ նրանց համար, ովքեր կիրարկել են այդ լավագույն կազմակերպումը»¹:

Ստախանովականները, սոցիալիստական մրցակցության այդ առաջավորները, հայրենիքի բարրության համար կատարած իրենց գերազանց աշխատանքով ուղիներ են հարթում ղեկի արտադրության հետագա ընդլայնումը, ղեկի արտադրանքի վորակի հետագա լավացումը, ղեկի աշխատանքի արտադրողականության հետագա բարձրացումը, ղեկի աշխատավորական լայն մասսաների նյութական բարեկեցության հետագա բարելավումը:

Ձիւղ ղեկավարել ստախանովյան շարժումը—նշանակում է վոչ միայն ստեղծել յուրաքանչյուր առանձին ստախանովականի աշխատանքի բարձր արտադրողականության համար անհրաժեշտ բոլոր պայմանները, այլև ամեն կերպ տարածել նրանց փորձը, պրակտիկ ոգնություն ցույց տալ ստախանովականների աշխա-

¹ Լենին, հատ. XXII, Հայհրատ, էջ 537, 1932 թ.:

տանքի մեքողները յուրացնելու ասպարեգում հետ մնացողներին : Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեն և անձամբ ընկեր Սաալինը բազմիցս նախազգուշացրել են տնտեսական ղեկավարներին, կուսակցական և պրոֆմիթեոսական կազմակերպութիւններին հատուկնաւ մարդկանց ունեւորներով հրապուրելուց՝ ի վնաս աշխատանքի ստախանովյան մեթոդների մասսայական տարածման :

Ստախանովյան բրիգադների, աշխատամասերի, ցեխերի, ստախանովյան ամբողջ ձեռնարկութիւնների համար մղվող պայքարում փորձի փոխանակումը վնասակար չէր և խաղում : Այդ բովեն յուրացրել մեր առաջափոր ձեռնարկութիւններում, վորտեղ ստախանովյան փորձի ընդհանրացումը և աշխատանքի ստախանովյան մեթոդների լայն արմատացումը դրված են ձեռնարկութեան ղեկավարութեան հիմքում : Մեքենաշինութեան առաջափոր ձեռնարկութիւնները—Որջոնիկիձէյի անվան դաղբյաճաշինապան գործարանը, Որջոնիկիձէյի անվան Ուրալմաշը, Կիրովսկի գործարանը, Կոլումնայի մեքենաշինական գործարանը և շատ ուրիշները ցեխերում ստախանովյան փորձի պլանաչափ արմատացման նպատակով՝ իրենց մոտ կազմակերպեցին ինժեներա-ստախանովյան բրիգադներ : Մեքենաշինարարները լավ են հիշում ինժեներներ ընկ. ընկ. Շարանովից ու Պենսից, տեխնիկներ ընկ. բժիկ. իյլինսկուց և Զարուբինից բաղկացած կոմպլեքսային բրիգադը, վորը հռչակափոր ստախանովական ընկ. Ի. Գուզովի գլխավորութեամբ աշխատամասից աշխատամաս, դաղբյաճից դաղբյաճ անցնելով, Որջոնիկիձէյի անվան դաղբյաճագործարանում արմատացնում էյին աշխատանքի գուղովյան մեթոդները : Այդ բրիգադն իր առաջ խնդիր դրեց վերանայել դետալների մշակման բոլոր տեխնոլոգիական պրոցեսները, նրանց մեջ մտցրեց ստախանովապանների կողմից առաջարկված և արդեն ստուգված ճշտումներ, ամեն տեսակ ոգնութիւն ցույց տվեց արտադրութեան նորարարներին : Որջոնիկիձէյի անվան դաղբյաճագործարանում հիշում են այն օրը, յերբ, իր աշխատանքն սկսելով յերրորդ մեխանիկական ցեխի ամենից ավելի հետ մնացող յերկրորդ աշխատամասից, ընկ. Գուզովի ղեկավարած բրիգադը դուրս բերեց այդ աշխատամասն առաջափորների շարքը : Այդ բրիգադի ոգնութեամբ գործարանի հետ մնացող շատ ցեխեր դուրս յեկան առաջափորների շարքը :

Հաղարարվոր առաջափոր բանվորների ստախանովյան գյու-

տաքարական միաքը պատշաճ հունով ուղղելու համար անհրաժեշտ և բոլշևիկյան հոգատար և կազմակերպող ձեռք : Աջակցել կենդանի, ստեղծագործող, նախաձեռնող ամեն ինչի, ահա հրամանատար-բոլշևիկին ներկայացվող պարտադիր պահանջը : Արտադրութեան հրամանատարները պետք է վոչ միայն ընդհանրացնեն ու հաղորդեն մեկ ձեռնարկութեան սահմաններում աշխատող ստախանովականների փորձը, այլև կոլեկտիվների ստախանովյան աշխատանքը կազմակերպեն այնպես, վորպեսզի նրանց փորձը հաղորդեն մյուս գործարաններին : Պրակտիկան ցույց է տալիս, վոր գործարանների միջև լավ կազմակերպված փորձի փոխանակութիւնը ուղիղ ճանապարհն է դեպի աշխատանքի արտադրողականութեան նոր վերելքը, դեպի արդյունաբերութեան ամբողջ ճյուղի աշխատանքի բարելավումը, դեպի ստախանովյան շարժման հետագա զարգացումը :

Այս իմաստով ամեն տեսակ խրախուսանքի յե արժանի ծանր արդյունաբերութեան մի շարք գլխավոր վարչութիւնների և միութիւնների կենտրոնական կոմիտեների նախաձեռնութիւնը, վորոնք գործնականորեն անցել են ստախանովյան փորձի միջոցով ծարանային փոխանակութեան ուղին : Այսպես, օրինակ, Կենտրոնի և Հարավի կառուցողների միութեան Կենտկոմը Համամիութենական կառուցողական մշտական ցուցահանդեսի ներկայացուցիչներին մասնակցութեամբ խոշոր կառուցումների վրա աշխատելու գործուղեցին հատուկ ստախանովյան բրիգադներ, վորոնց կազմի մեջ մտան այնպիսի հռչակափոր ստախանովական կառուցողներ և աշխատանքի ստախանովյան մեթոդների հրահանգիչներ, ինչպես չքանչանակիր վորմնադիր ընկ. Ժմուրինը, ծեփագործ ընկ. Բերեզովսկին, հյուսնի ատաղձագործի աշխատանքների վարպետ ընկ. Յերոխինը և շատ ուրիշները : Այս բրիգադները այցելեցին ութ խոշոր շինարարական տրեստների կառուցումներ : Զբոսեցան ու զննեցումներ անցկացնելով, բրիգադի անդամները հենց իրենք, անցնելով աշխատանքի վայրը, տեղնուտեղը գործնական ձևով ցույց էյին տալիս իրենց աշխատանքի մեթոդները :

Գործարանների միջև փորձի փոխանակման ստախանովյան բրիգադներ կազմակերպեց Տրանսպորտային մեքենաշինութեան գլխավոր վարչութիւնը : Այս բրիգադները հետ մնացող ձեռնարկութիւններում ուղի-ուղով ծանոթացան գործերի վիճակին և հայտարարեցին բավականաչափ ներգործարանային ուղեբլներ, վորոնց ոգտագործումը մեծ դեր խաղաց աշխատանքի արտադրո-

դակահուծյունը բարձրացնելու գործում: Այս բրիգադների ան-
դամները տեղերում համոզվեցին, վոր արտադրութեան կազմա-
կերպման մեջ անհրաժեշտ կարգ ու կանոնի բացակայութեանը
հնարավորութիւնն էի տալիս բարձրացնել աշխատանքի արտա-
դրողականութիւնը: Այսպէս, որինակ, բանվոր Յեգորովի անվան
գործարանում պատասխանորձ-ստախանովուհի ընկ. Կարպովան,
վորը փորձի փոխանակման կարգով ալցելէ և Կալինինի վաղնա-
շինական գործարանը, գրում եր. «Տամբուրի հարմոնը մենք կա-
րում ենք կարի մեքենայով և սրական պատրաստում ենք 14—15
հատ: Իսկ Կալինինի գործարանում հարմոնը կարում են ձեռքով,
և սրական բաց են թողնում վոչ ալէլի, քան 4 հատ, մինչդեռ
կարի մեքենան ալստեղ պարսպ է մեւում»: Եւ զարմանալու տեղիք
չէ մնում, վոր Կալինինցիների մոտ՝ այդ դետալի շատ ավելի
բարձր գնահատութեան պայմանում, աշխատավարձն զգալիորեն
ավելի քիչ է, քան բանվոր Յեգորովի անվան գործարանում: Յեւ
այդպիսի որինակներ ընկ. Կարպովան բավական շատ է բերում:

Տրանսպորտային մեքենաշինութեան, Դադլայահաշինական ար-
դյունաբերութեան գլխավոր վարչութեան, Գյուղատնտեսական
մեքենաշինութեան գլխավոր վարչութեան և այլ գլխավոր վար-
չութիւնների ստախանովականների ուղեւորութեանների ամենա-
մեծ նշանակութիւնը թերեւս այն է, վոր նրանք ե՛լ ավելի բոքո-
քեցին մրցակցութեան հուրը: Այլ կերպ չէր ել կարող լինել:
Ստախանովականներին՝ սոցիալիստական մրցակցութեան այդ
առաջավորներին գործարաններում շատ են հաւրի առնում: Նրանց
գնահատում են վորպէս առաջավոր մարդկանց, իրենց գործի
վարպետների, նրանց խոսքերին ու շարքութեանը ականջ են
դնում: Այդ առանձնապէս վառ կերպով կարելի չէ տեսնել Գոր-
կու անվան Կիւի դադլայահաղորդարանի անվանի ստախանովական
ընկ. Շվինենկոյի ուղեւորութիւնների արդյունքներէ, վորն իր
փորձը հաղորդելու նպատակով ալցելեց Մոսկովայի և Լենինգրա-
դի շատ գործարաններ:

Մեր յերկրում, և միայն մեր յերկրում, չկան «գաղտնիք-
ներ», այսինքն արտադրական տխրահուշակ գաղտնիքներ, վորոնք
բնորոշ են կապիտալիստական յուրաքանչյուր ձեռնարկութեան
համար, կապիտալիստական յուրաքանչյուր յերկրի համար:
ԽՍՀՄ մեջ արտադրական փորձի լայն փոխանակման համար
գործունէութեան իսկապէս անձայրածիր դաշտ կա: Բայց այդ
փորձը հաղորդել, այն փոխանակել հարկավոր է ամեն մի առան-

ձին դեպքում խորամուկ լինելով գործի էյուրփյան մեջ: Չափա-
յանց վնասակար կլինէր յենթադրել, վոր ստախանովյան փորձը
հաղորդելը կարելի չէ յոկ կարծիքների փոխանակութեան միջո-
ցով: Ստախանովականները, արտադրութեան այդ նորարարները,
առաջավոր տեխնոլոգիայի համար պայքարող մարտիկները,
դյուռնարարները և ուսցիտնալիզատորները, ձգտում են ամենա-
ջանադիր կերպով ուսումնասիրել աշխատանքի արտադրողակա-
նութեան հետագա բարձրացման հնարավորութիւններն իրենց
աշխատանքի վայրում: Այս խմաստով խիստ հետաքրքրական ու
ցուցանշական են Մաքս Հէյցի անվան գործարանի հղկորդ-ստա-
խանովական Ի. Ստրոկիովի միջոցառումները, վորը յերկար ժա-
մանակ ուսումնասիրել և մեր յերկրի անվանի Փրեզդոր Ի. Գու-
դովի փորձը:

«Շատ բանում ոգնեց ինձ չքանչանակիր ընկ. Գուդովը,—
գրում է ընկ. Ստրոկիովը:—Յես ջանադիր կերպով ուսումնասի-
րեցի աշխատանքի նրա մեթոդները տեխնիկական տեսակետից, և
այդ ինձ թույլ տվեց կիրառել այդ մեթոդները հարթ հղկման
մեջ: Կադապարների ձուլվածքի կափարիչում յեղած փորատները
հղկելիս յես գործադրեցի կտրիչ գործիքի սարքվածք: Առաջ այս
աշխատանքը կատարվում էր մեկ վուլկանային ծակիչ բոլորա-
կով, յես չըջանակի մեջ տեղավորեցի 14 բոլորակ. և ամբողջ
դետալը պատրաստեցի մեկ պտույտի ընթացքում 14-ի փոխարեն:
Սողակը հղկելիս յես կարողացա նորմաները կատարել 450 տոկո-
սով: Այստեղ յես դնացի նույն ճանապարհով, ինչ վոր ընկ. Գու-
դովը, այսինքն զգալիորեն ավելացրի միաժամանակ մշակվող
դետալների թիւը: Դրա համար,—գրում է այնուհետեւ ընկ.
Ստրոկիովը,—յես ինքս պատրաստեցի բազմատեղ հարմարանք,
վորը թույլ է տալիս յերկուսի փոխարեն մի անգամից պատրաս-
տել 215 դետալ: Առաջ պահանջվում էր բուն դետալի տեղը հար-
մարանքի մեջ յերեք անգամ փոխել: Այժմ չնորհիվ իմ հարմա-
րանքի, վորը փոխում է իր դիրքը հղկիչ բոլորակի նկատմամբ,
դետալը նրա մեջ մնում է անշարժ ամբացված: Այդ արագացրեց
մշակման սրոցեսը և՛ բարձրացրեց նրա ձգբտութիւնը»:

Իսկ ահա մի այլ որինակ: Հայտնի չէ, վոր աշխատանքի ար-
տադրողականութեան համար մղվող պայքարում փոքր դեր չի
խաղում հարմարանքը ճիշտ կերպով դետալներով լցնելու գործը:
Ընկ. Ստրոկիովը գործադրեց հատուկ կառուցանքներ, վորոնց մեջ
դարձվում են դետալները և այդ տեսքով ել անցնում աշխատա-

վայրը: «Ինձ,—չարունակում ե ընկ. Ստրոկովը,—մնում ե լսել
կատսեաները մտցնել հարմարանքի փորատի մեջ և, դուրս քաշե-
լով կասեանները, դետալը մոտ հրել»:

Այս հասարակ միջոցառումը թույլ տվեց կրճատել լցնելու
համար պահանջվող ժամանակը տա՛ս անգամ: Բերված որինակը
մի ավելորդ անգամ ապացուցում ե, թե հետ մնացող տեղամա-
սում փորքան խնամքով պետք ե վերաբերվել դեպի գործի
ուսումնասիրությունը, վորպեսզի այդտեղ եֆեկտիվ կերպով կե-
րտենք աշխատանքի ավելի առաջավոր մեթոդներ:

Արտադրութայն մեջ մանրամասներ չկան: Քիչ չեն այն դեպ-
քերը, յերբ այսպես կոչված «մանր» անհարկությունները, յեթե
նրանց անուշադիր վերաբերվենք և նրանց վերացնելու համար
անհրաժեշտ միջոցների չգիմենք, վիժեցնում են պլանային առա-
ջադրանքների կատարումը: Այդպիսի հոգատար վերաբերմունքի
մասին դեպի առաջին հայացքից մանրունք թվացող բաները պոտ-
մում ե Ստալինի անվան Ռոստոսեյմաչի ստախանովական Մ. Սի-
րոտան:

«Կոմբայնների ցեխի չարխագործ ընկ. Դուբինինը յերկար
ժամանակ չէր կարողանում յուրացնել կոմբայնների համար
կրոնշտեյններ մշակելու նորման: Յես ուշի-ուշով հետևում եյի,
թե նա ինչպես ե մշակում կրոնշտեյնը, և յեկա այն յեզրակա-
ցության, վոր անցքեր բանալը պետք ե կատարել վոչ թե հատիչ-
ներով, ինչպես այդ անում եր ընկ. Դուբինինը, այլ պինդ ձուլ-
վածքներից պատրաստված գենկերներով: Կանգնելով դադաչահի
մոտ, յես ցույց տվի ընկ. Դուբինինին, ինչպես և հարեան մյուս
չարխագործներին, կրոնշտեյններ մշակելու ձևերը և գործնակա-
նորեն ապացուցեցի իմ մեթոդի առավելությունը: Այժմ ընկ.
Դուբինինը և մյուս չարխագործները կոմբայնների համար կրոնշ-
տեյններ մշակելիս յերկու-յերեք նորմա յեն կատարում»:

Կոլմնայի՝ Կույբիշևի անվան մեքենաշինական գործարանի
թվածուական ցեխի յերրորդ աշխատամասի ստախանովական-կա-
դապարիչներ ընկ. ընկ. Յե. Չաչխիտինի և Մ. Տկաչովի փորձի
հիման վրա հաջողվեց նոր ձևով կադմակեբսել կադապարժան
ամբողջ գործը: Մինչև այդ վերակառուցումը կադապարիչների
բրիգադները ապլիս եյին աշխատանքի խիստ ցածր արտադրողա-
կանություն և դրա համապատասխան ել ցածր աշխատավարձ
եյին ստանում: Անցկացված միջոցառումների հետևանքով այդ՝
արտադրության համար խիստ կարևոր աշխատամասը ապլիս ե

առնելան 200 տոկոս միջին արտադրողականություն, իսկ միջա-
նի բրիգադներում—մինչև 260 տոկոս: Արտադրանքը՝ հաշված
աշխատաժամերով, բրիգադներում բարձրացավ ամսական 250—ից
մինչև 425—ի, և ըստ այն խիստ աճեց աշխատավարձը (որինակի
համար, բրիգադիր Չաչխիտինի աշխատավարձն ավելի քան յեռա-
սյատկվեց):

Ինժեներների ու ստախանովականների բրիգադներին՝ փորձի
փոխանակման նպատակով կատարվող ուղևորությունները—ստա-
խանովյան շարժման զարգացման գործուն մեթոդներից մեկը—
պետք ե զուգակցել ստախանովյան դպրոցների լայն ցանց կազմա-
կերպելու, ձեռնարկություններում աշխատանքի ստախանովյան
մեքանիզմների հրահանգիչների կադրեր պատրաստելու և առաջ քա-
շելու հետ: Որինակ, Ռոստոսեյմաչում հենց ստախանովականների
միջից առաջ են քաշվել մի շարք այդպիսի հրահանգիչներ: Ընկ.
Կոսիցինը կոմբայնների ցեխի ստախանովական ե, կուսակցու-
թյան թեկնածու, վորակյալ մամլիչ: Նա լայնորեն հաղորդակից
ե անում իր փորձին և կարողացել ե աճեցնել այնպիսի ստախա-
նովականներ, ինչպես ընկ. ընկ. Պոխիլյուկը, Մեդնիկովը, Ար-
խիպովը և շատ ուրիշները: Ռոստոսեյմաչում վորպես աշխատան-
քի ստախանովյան մեթոդների հրահանգիչներ առաջ են քաշված
ընկ. ընկ. Մելկոն, Ուլանսկին, կուսակցության անդամ ընկ.
Յերոչկինան, ընկ. Ռուդերիկովը և գործարանի այլ ստախանովա-
կաններ, վորոնք իրենց հերթին ստախանովականների նոր կադ-
րեր են պատրաստել:

Թե փորքան դրական բարդունք ե տալիս գործարանները փոր-
ձի փոխանակման նպատակով աշխատանքի ստախանովյան մեթոդ-
ների հրահանգիչներին կադմված բրիգադներ ուղարկելը, ցույց
ե տալիս Գլխայինաչի բրիգադի աշխատանքը: Այդ բրիգադը,
վորի մեջ մտան ընկ. ընկ. Ս. Ժիլցովը, Պ. Գրուշինը, Ֆ. Կա-
միլանսկին, Ֆ. Ստրուբելովը, մոտ մի ամիս անցկացրեց Լապ-
տեվոյի «Կրասնի լուչ» գործարանում, Լենինգրադի «Վուլկան»
գործարանում և Ռյազանի գյուղատնտեսական մեքենաների գոր-
ծարանում: Բրիգադի առջև խնդիր եր դրված—հաղորդել Ռոստո-
սեյմաչի, Լյուբերեցի գործարանի և Կիրովգրադի «Կրասնայա
գվեղդա» գործարանի ստախանովականների փորձն այդ յերեք
ձեռնարկությունների ստախանովականներին: Այդ գործարաննե-
րից յուրաքանչյուրում գործերի վիճակին ուշի-ուշով ծանոթա-
նալուց հետո բրիգադը համոզվեց, վոր շատ տեղամասերում գոր-

ծագելով և ակնհայտորեն հնացած տեխնոլոգիա. Այսպես, որինակ, Ռյազսեյմաշի մեխանիկական ցեխում Ֆրեզերովկայի հնացած տեխնոլոգիան զերադասում են դուգուլյան մեթոդներից, հաշվում են կտրման ակներեւորեն ցածր արագությունները հետ: Բրիգադը մայրենց արժեքավոր մի շարք առաջարկներ, վորոնք արդեն դործադրվել են այդ դործարաններում և տալիս են զգալի եֆեկտ: Վորպես որինակ կարելի յե մատնանշել Ռոստոսեյմաշի լինեներ ընդ. Կոնստրուկտի մեթոդով կտրիչները ձուլվածքներով ծածկելու մասին բրիգադի արած առաջարկը, վորն անմիջապես ընդունվեց «Վուլկան» դործարանում և իրացվեց արտադրության համար մեծ ոգուտով:

ՌԻՏՅՍՀ Գերագույն Խորհրդի ղեկավարներ Ա. Սերգեյեֆից, Ի. Մարտիլովից, Վ. Կաշարովսկուց, Գ. Պավլովից, Մ. Լեչչենկոյից, Ա. Չերնիխովսկուց կազմված բրիգադը, վորն իր ստախանովյան փորձը հաղորդեց Լենտեքստիմաշի աշխատողներին, այդ դործարանում խոշոր թերություններ հայտարեց արտադրության կազմակերպման մեջ: Բրիգադի անդամները մայրին շատ արժեքավոր առաջարկներ, վորոնք դործարանին զգալի չափով ոգնեցին կազմակերպելու տեքստիլ արդյունարեության համար անհրաժեշտ ժապավենային մեքենաների մասսայական բացթողում:

Աշխատանքի արտադրողականությունն ավելացնելը միաժամանակ նշանակում է ամեն կերպ զարգացնել ստախանովյան շարժումը՝ մեր ժամանակի այդ անհաղթահարելի շարժումը: Գյուտարարության ու մասսայական ռացիոնալիզացիան ամեն կերպ խրախուսելը, առաջավոր տեխնոլոգիայի արժատացման համար պայքարելը, սաբքավորման, գործիքների և հարմարանքների հասարակական ստուգատեսներ կազմակերպելը, տեխնիկական նորմաները բարելավելը—այս բոլորը հսկայական չափով ոժանդակում են ստախանովյան շարժման հետագա զարգացմանը, պայմաններ են ստեղծում աշխատանքի բարձր արտադրողականության համար: Ստախանովյան փորձի մասսայական փոխանակման կազմակերպումը կապահովի այդ գործուն ձեռնարկումների ամենալայն անցկացումը: Ստախանովյան յերրորդ հնգամյակի հետագա հաջողությունները պայմանավորված են ստախանովյան շարժման լայն ու խորը զարգացմամբ:

Սոցիալիզմը ստեղծել է բոլոր պայմանները՝ մարդկային տանդանների հայտարեման համար: Սոցիալիստական պետությունը

հնարավորություններ է ստեղծում աշխատավորների համար՝ յերեան բերել իրենց, զարգացնել իրենց ընդունակությունները, վորոնց անսպառ աղբյուր է ժողովուրդը: Ստախանովը, Բուսկովինը, Կրիվոնոսը, Գուգուլը, Դեմչենկոն և ստախանովյան շարժման այլ նախաձեռնողները, մեր յերկրի անվանի մարդիկ,—սրանք բոլորը դուրս են յեկել ժողովրդի ծոցից: Խորհրդային ժողովրդին ել նրանք նվիրաբերել են աշխատանքի արտադրողականության բնագավառում ձեռք բերած իրենց նվաճումները:

Ժողովրդի մեջ կուտակված ստեղծագործ ուժերն անսահման են: Բանվորների, կուլտեստականների, խորհրդային ինտելիգենցիայի ստեղծագործ միտքը կապահովի սոցիալիստական տնտեսության, կուլտուրայի ել ավելի արագ վերելքը ստախանովյան յերրորդ հնգամյակում:

III. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՄԱՐ

ՀամԿ(Բ)Կ XVIII համագումարը, մատնանշելով, վոր արդեն ամենամոտիկ ժամանակի ընթացքում անհրաժեշտ է դործնաիրեն լուծել ԽՍՀՄ հիմնական տնտեսական խնդիրը, իր վորումները մեջ ընդգծեց հետևյալը.

«Դրա համար անհրաժեշտ է ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի տեխնիկական գինման հետագա զգալի աճում և, հետևաբար, մեքենաշինության ու ամբողջ ծանր արդյունարեության ամեն տեսակ զարգացում, արտադրության ամբողջ կազմակերպման ու տեխնոլոգիայի վճռական բարելավում և գիտության նորագույն նվաճումների ու գյուտերի լայն արժատացում...»

Սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու հսկայական խնդրի լուծումը և կոմունիզմի՝ «յուրաքանչյուրից բոտ նրա ընդունակությունների, յուրաքանչյուրին բոտ նրա պահանջմունքները» սկզբունքի կենսագործումը պահանջում է արտադրողական ուժերի զարգացման բարձր մակարդակ և աշխատանքի արտադրողականության դրան համապատասխան մակարդակ, պահանջում է վորակապես նոր տեխնիկա:

Ստախանովյան շարժումը ընթանում է հենց աշխատանքի այն արտադրողականության և այն առատության ճանապարհով, վորոնք անհրաժեշտ են կոմունիզմին անցնելու համար: Կոմունիստներն գիտակից աշխատողներ՝ ստախանովականների, տեխնի-

կապեր կոխված, կուլտուրական մարդկանց կողմից դրված և ևս ստեղծագործ ճանապարհով շուծվում և տեխնոլոգիայի բուն ելու-
թյան մեջ թափանցելու խնդիրը: Ըմբռնելով տեխնոլոգիայի բա-
ցառիկ մեծ նշանակությունն աշխատանքի բարձր արտադրողա-
կանություն համար մղած պայքարում, նրանք վճռաբար բարելա-
վում են արտադրությունից մինչև կադրակերպումն ու տեխնոլոգիան,
կատարելագործում են արտադրություն բուն պրոցեսը:

Այդ ամենից լավ նկատելի յե մեքենաշինական գործարաննե-
րում, վորտեղ, ինչպես հայտնի յե, գոյություն ունի տեխնոլո-
գիական պրոցեսների ամենամեծ քանակություն: Հենց այստեղ
կարելի յե հետևել այն անցմանը, վոր տանում և տեխնիկայի
ոգտագործման պայմանների ստեղծագործական փոփոխություն-
նից, գործիքների կատարելագործման և մեքենաների ու դադ-
դյահների առանձին դետալների գործողությունից ինտենսիֆիկա-
ցիայից դեպի մեքենաների միասնական կատարելագործված ռիս-
տեմի ստեղծումը, դեպի վորակապես նոր տեխնիկայի, կոմու-
նիզմի տեխնիկայի ստեղծումը:

Ստալինյան հնգամյակների տարիներին ընթացքում խորհրդա-
յին մեքենաշինությունից դեմքն արժատապես փոխվեց: ԽՍՀՄ մեջ
կառուցված են հարյուրավոր նոր առաջավոր ձեռնարկություն-
ներ, վորոնք հազեցած են ամենաառաջավոր տեխնիկայով: Մեր
գործարաններում դրված են և աշխատում են ամենալավ արտա-
դրող դադդյահներ—ադրեդատային, յերկարաձիգ, վորդրկող,
պրեկիլիոն դադդյահներ: Դրված են բարձր արտադրողականու-
թյուն ունեցող ամեն տեսակ ավտոմատներ, ջերմային մշակման
նորագույն սարքավորումներ և ճշգրիտ չափող գործիքներ: Ար-
մատացված են գործիքներ՝ ամուր և խիստ ամուր ձուլվածքնե-
րից, արագահատ պողպատից, վորոնք զգալիորեն փոխում են
կտրման ռեժիմները: Այս բոլորը լուրջ բազա յեն ստեղծում աշ-
խատանքի արտադրողականությունը զգալի չափով ավելացնելու
համար:

Մեր Փարբիկաների ու գործարանների բազմաթիվ աշխատա-
մասերում մենք տեսնում ենք ստախանովականների, ինժեներների
ու տեխնիկների գերազանց աշխատանքի նմուշներ: Կարելի յե բե-
րել հսկայական քանակությամբ որինակներ, վորոնք ցույց են
տալիս, թե ինչպիսի հզոր ռեզերվներ են հայտարարվում ստախա-
նովականների կողմից:

Մոսկվայի՝ Ուլժոնիկիձեյի անվան դադդյահագործարանի ան-

վանի ստախանովական ընկ. Գուդովը մի շարք տարիների ըն-
թացքում հեղափոխականացնում և դետալների ֆրեզման տեխնո-
լոգիան: Ընկ. Գուդովի մեթոդի մեջ գլխավորը միքանի ուղեբա-
ցիաների միաժամանակ կատարվող համատեղումն և, բազմաթիվ
դետալները մի ֆրեզերային դադդյահի վրա տեղավորելը և հա-
տուկ հարմարանքների ու համապատասխան գործիքների՝ գործա-
դրումն և: Ընկ. Գուդովն այսպես և բնութագրում իր մեթոդը:

«Յես իմ դադդյահը գործի յեմ դցում ամենամեծ արագու-
թյամբ, գործադրում եմ հարմարանքներ, վորոնք թույլ են տա-
լիս մեծացնել միաժամանակ մշակվող դետալների քանակը, մի-
քանի ուղեբացիաներ միացնում են մեկ ուղեբացիայի մեջ և,
իհարկե, վորպես կանոն, որինակելի ձևով եմ պահում իմ աշ-
խատատեղը և գործիքները»:

1935 թ. նոյեմբերին ընկ. Գուդովը «Ֆրեզերային ֆրեզե-
րային դադդյահի վրա 7 ժամվա ընթացքում պատրաստեց 708
փականային կախարիչներ, նորման կատարելով 1.430 տոկոսով,
դեմանդական նորման գերազանցելով 4,5 անգամ: Ընկ. Գուդովը
մամլակներում մեկի փոխարեն տեղակայեց մեկ անգամից վեց
դետալ, մեկի փոխարեն գործադրեց յերկու սկավառակային
ֆրեզներ և հատման արագությունը մի րոպեյում սահմանված
20-ի փոխարեն հասցրեց 34 մետրի:

Իր ամենամեծ ռեկորդն ընկ. Գուդովը սահմանեց 1937 թ.
դեկտեմբերի 23-ին, կեռ մշակելով սեղմիչ կապիձի համար: Նա
3 ժամ 58 րոպեյի ընթացքում ֆրեզման յենթարկեց 238 կեռ, վո-
րք կազմեց նորմայի 9.050 տոկոսը: Նախկին հինգ ուղեբացիանե-
րի հետեողական կիրարկման փոխարեն ընկ. Գուդովն այդ դե-
տալները ֆրեզեց հատուկ հարմարանքների օգնությամբ՝ միա-
ժամանակ աշխատող յերկու դադդյահների վրա:

Ընկ. Գուդովն իր աշխատանքի մասին պատմում և. «Մի
դադդյահի վրա հարմարանքի մեջ լցնում եյի 20 հատ դետալ:
Յերբ յես այդ դետալները դրել ու ամրացրել եմ—միացնում եմ
դադդյահը: Նա սկսում և ինքն իրեն բանել: Այն ժամանակ յես
չուռ եմ դալիս, հանգիստ գնում եմ մյուս դադդյահի մոտ, հար-
մարանքը նույն ձևով լցնում եմ—միաժամանակ 30 հատ դետալ—
և հետո միացնում եմ: Այստեղ յերկրորդ դադդյահը նույնպես
սկսում և ինքն իրեն աշխատել: Այն ժամանակ չուռ եմ դալիս
դեպի առաջին դադդյահը: Աշխատանքն արդեն գնում և, իսկ յես
պատրաստում եմ 10 դետալներ, վորոնք պետք և լցնեմ: Ժամա-

նակը վերջանալու վրա յե: Յես անջատում եմ: Հանդիստ կերպով թուլացնում եմ կտայը: 10 հատ այնպեղից դուրս եմ հանում և տեղափոխում եմ յերկրորդ դադեյա՜հի մոտ... Այնտեղ գազգյա՜հը կանգնեցնում եմ: Դուրս եմ հանում արդեն պատրաստի 10 հատ դետալը, իսկ 20 հատ կիսաֆարրիկատներ մնում են ինձ մոտ:

Ինձ մոտ թափելորդ շարժումներ չկան, և ինձ մոտ չկան անվատահ շարժումներ: Յեթե յես արդեն վերցնում եմ բանալին, ապա անպայման գիտեմ, վո՞ր այդ բանալիով յես սխալ թուլացնեմ գայկան: Ընդամեն յես վոչ մի դեպքում չեմ դարձնում դեպի աջ, քայլ անպատճառ դեպի ձախ: Իրարանցում չկա, վորովհետեւ այն վնասակար է: Շտապելիս և իրար անցնելիս ոգտակար վոչինչ չես անի: Այս ամենն ինձ հաջողվեց միայն այն պատճառով, վոր ինձ չըջապատում եր քմուր բանվորական և ինժեներատեխնիկական կոլեկտիվ: Ոգնում եյին դիրեկցիան, կուսակցական և պրոֆսիոնթենական կազմակերպությունները»¹:

1939 թ. հոկտեմբերի 4-ին, աշխատելով նույն այդ յերկու դադեյա՜հների վրա, ընկ. Գուդովը տվեց նոր նորմայի 1.360 տոկոսը:

Աշխատողական պրոցեսների մեխանիզացիան ավտոմատ դադեյա՜հների կիևի գործարանում հնարավորություն տվեց փակա՜նադորձ ընկ. Շվինենկոյին 1938 թ. ոգոստոսին 2 ժամ 4 րոպեյի ընթացքում կատարել չարխադորձական կիսաավտոմատների համար սեղմիչ կապիճների փորակներ մշակելու կես տարվա առաջադրանքը: Առաջ այդ շատ աշխատողական պրոցես եր: Չարխադորձական կիսաավտոմատների համար սեղմիչ կապիճների մի կոմպլեկտի (6 հատի) մշակումը խլում եր մի ամբողջ ամիս: Կապիճի մեկ կորպուսի փականագորձական մշակումը, կապիճ, վորի մեջ կա յերեք փորակ, նորմայով սահմանված է յեղել 26 ժամ 30 րոպեյում: Ընկ. Շվինենկոն այդ աշխատանքն այժմ կատարում է 3,1 րոպեյի ընթացքում: Ընկ. Շվինենկոն պատրաստել և հավաքածո պրոֆիլային ձգան, վորը կարելի յե հարմարեցնել յժակային մամուլին և միաժամանակ մշակել բոլոր 8 մակերևույթները փորակի մեջ, արմատապես փոխելով կապիճների փորակների մշակման տեխնոլոգիան: Ձեռքի փականագորձային աշխատանքը (չարբովկան) փոխարինելով մեխանիկական մշակ-

մամբ՝ հավաքածո ձգանի ոգնությամբ, ընկ. Շվինենկոն նորման կատարեց 50.000 տոկոսով (հինգ և չորս գերո—հիսուն հազար տոկոսով):

Մեքենաշինության մեջ ստախանովյան շարժման նախաձեռնողները—ընկ. ընկ. Բուսիդինը, Գուդովը, Լիխորադովը, Սլավոնկովան, Դիանովը—յուրաքանչյուրն իր տեղամասում ցույց են տալիս աշխատանքի սոցիալիստական արտադրողականության նմուշներ: Այս մարդկանց աշխատանքն արդեն լավ հայտնի և ժողովրդական է մեր յերկրում: Հարյուրավոր և հազարավոր ստախանովականներ աշխատանքի հիանալի արդյունքներ են տալիս, ցույց են տալիս աշխատանքի բարձր արտադրողականության նմուշներ:

Կոլոմնայի՝ Կույրիչեվի անվան գործարանի ստախանովական-դուբիչ ընկ. Պոպրիկինը, գործադրելով չաղափների սառեցում՝ չուգունե դետալների մշակման ժամանակ, հնարավորություն ստացավ կորման արագությունը մեծացնելու և մի րոպեյում 14,25 մետրից հասցնելու մի րոպեյում 26,7 մետրի, բարձրացնելով չաղափների պտտման արագությունը և հասցնելով մի րոպեյում 235 պտույտի: Այդ նրան հնարավորություն տվեց դետալների մշակման վրա ծախսվող ժամանակը կրճատել և 40 րոպեյից հասցնել 16 րոպեյի, այսինքն՝ 2,5 անգամ: «Ելեկտրիկ» գործարանի փականագորձ ընկ. Մեդիսը չափազանց հաջող կերպով ոգտադորձեց համակցված անկյունարդը դետալները՝ փականագորձական մամուլներում ամրացնելու համար, այսինքն կրկնակի չափով կրճատեց դետալների մշակման վրա ծախսվող ժամանակը: Նման որինակները հազարավոր ու հազարավոր են:

Հարց է ծագում, իսկ ինչո՞ւ ստախանովյան առաջավոր տեխնոլոգիայի նման նմուշները, վորոնք ընդունված են առանձին աշխատամասերում, առանձին ցեխերում և նույնիսկ թամբող ձեռնարկություններում, տակալին չեն դարձել արդյունաբերության նյութերի սեփականությունը: Ի՞նչպես կարելի յե հաշտվել, որինակ, այն բանի հետ, վոր շատ մեքենաշինական գործարաններում պտտուն դադեյա՜հները մինչև այժմ ոգտագործվում են վորպես հասարակ չարխագորձական դազգյահներ, տալով յերկու անգամ պակաս արտադրամք, քան կարող եյին տալ: Միևնույն գործարաններ չարունակում են առանցքակալի պահանջները և անուրները չարխել ամբողջովին բրոնզից, դրա վրա կորցնելով արժեքավոր դեֆիցիտային դունավոր մետաղի տանյակ տոններ:

¹ «Известия» от 29 декабря 1937 г.

Այդ գործարանները չեն ոգտագործում մյուս, յերբեմն հարեան գործարանները փորձը, վորտեղ այդ գետալները պատրաստվում են բիմետալիկ կերպով՝ կենտրոնախույս ձուլման մեթոդով: Գործարանները թույլ են ոգտագործում նաև ցեմենտման նոր մեթոդը, վորը կիրառվել է Ուլոնիկիձեյի անվան գաղգյահագործարանում: Հսկայական աններդաշնակութուն գոյութուն ունի նաև կորման ռեֆիների բնագավառում, վորը խոշոր կորուստների յե հասցնում աշխատանքի արտադրողականության և սարքավորումն ոգտագործելու բնագավառում:

Թե վորքան մեծ ռեզերվներ են թաղնված առաջադոր ստախանովյան տեխնոլոգիայի արմատացման մեջ, կարելի յե դատել երկտրոարդյունարերության որինակով: Երկտրոտեխնիկական գործարանները հաճախ միևնույն տեխնիկական հարցերը տարբեր մեթոդներով են լուծում: Երկտրական մեքենաների դանազան գետալների փաթաթումը, մեկուսացումը, զրոշմումը, զոգումը, վերջապես մեխանիկական մշակումը կատարվում է բոլոր երկտրոմեքենաշինական գործարաններում, բայց ամեն մի գործարան մշակում է և ոգտվում է իր տեխնոլոգիայով, հաճախ նույնիսկ չիմանալով այն մասին, վոր մյուս, նույնատիպ և միևնույն սարքավորումն ունեցող ձեռնարկության մեջ գոյութուն ունի ավելի կատարյալ ու եֆեկտիվ տեխնոլոգիա: Հաճախ է պատահում, վոր նույնիսկ հայտնի և իրենց լիովին արդարացրած ստախանովյան նոր տեխնոլոգիական պրոցեսները չափազանց դանդաղ են արմատացվում կամ բոլորովին չեն արմատացվում արտադրության մեջ:

Ահա միքանի կոնկրետ որինակներ: Լեպսեյի անվան գործարանում պատրաստվող երկտրական մեքենաները ընդհանուր շատ բան ունեն ավտոտրակտորային սարքավորման մեքենաների հետ, բայց Լեպսեյի անվան գործարանում նրանց պատրաստման ժամանակ կիրառվում են մի տեսակ տեխնոլոգիական պրոցեսներ, իսկ ԱՏԵ-յում (ավտո-տրակտորային երկտրոսարքավորման գործարանում) — այլ տեսակ պրոցեսներ: Փաթաթման յեղանակները, կոլեկտորների ու բեռներին մշակումները նույնիսկ այն մեքենաներում, վորոնք իրենց աշխատանքի սկզբունքով համանման են, խիստ տարբերվում են այդ յերկու գործարաններում: ԱՏԵ-յում կոլեկտորը մամլում են, իսկ Լեպսեյի անվան գործարանում այն չարխում են: Առանձին կոլեկտորներում գործածվում է պլաստմասսա, նույն տիպի այլ կոլեկտորներում՝ փայլար:

ԱՏԵ-յում բեռների մի մասը շտամպում են, մյուս մասը՝ ֆրեզում:

Մոսկվայի լուսարձակային գործարանի տարբեր ցեխերում միևնույն գետալը — գլանաձև ժանանիլը — մշակվում է բոլորովին տարբեր տեխնոլոգիայով. մեխանիկական ցեխում այն մշակում են մետաղի կտրված կտորից, վերանորոգման ցեխում՝ կտրում են յերկաթի կամ պողպատի ձողից, իսկ գործիքային ցեխում՝ մետաղը ուղարկում են նախ դարբնոց, այնուհետև մշակում են և դարձնում կռանվածք: Դրա վրա ծախսվում է մոտավորապես յերեք անգամ ավելի շատ ժամանակ, քան թե մեխանիկական ցեխում:

Հայտնի յե, վոր երկտրոգոգումը լայնորեն կիրառվում է երկտրոարդյունարերության ձեռնարկություններում: Բայց լավագույն զոգողները փորձը բավականաչափ չի ժողովրդականացված մեր գործարաններում: Մոսկվայի տրանսֆորմատորային գործարանի ստախանովական ընկ. Բլազովը հոսանքի ուժը մեծացնելու միջոցով հստակ արտադրողականության զգալի ավելացման, բայց աշխատանքի նրա մեթոդը պարտադիր չդարձավ նույնիսկ տրանսֆորմատորային այդ նույն գործարանի զոգողներին համար: Այդ մեթոդով շատ քիչ են ոգտվում և մյուս ձեռնարկություններում:

Ձեռնարկությունների մեծ մասում դայկանների յեղրալայնումը (մի շատ տարածված ոպերացիա) կատարվում է չաղափող գաղգյահների վրա: Լեպսեյի անվան գործարանում ստախանովական — վարպետ ընկ. Տյուրինը կառուցեց մի կիսաավտոմատ, վորի վրա դայկանների յեղրալայնումը կատարվում է միաժամանակ յերկու կողմերից: Այդ բարձրացում է աշխատանքի արտադրողականությունը զրեթե վեց անգամ: Այնուամենայնիվ մյուս գործարաններում այդ կիսաավտոմատը բավականաչափ լայն տարածում չստացավ:

Արդյունարերության ամեն մի աշխատող գիտե, վոր երկտրո-արդյունարերության զրեթե բոլոր գործարաններում հարկ է լինում կորատել մեկուսիչ նյութը: «Երկտրոսպարատում», «Իզոլիտում» և այլ գործարաններում գետինքսը, տեքստիլտը և մեկուսիչ այլ նյութերը կորտում են ֆրեզերային դագգանների վրա, սկավառակային ֆրեզներով: Այդ խիստ աշխատելի ոպերացիա յե, ընդվորում ֆրեզներն արագորեն մաշվում են, թերթերն անհավասարաչափ են կորատվում, նրանց ծայրերը հա-

ճակն պոկվում ընկնում են: Լուսարձակները գործարանում գործադրում են ուրիշ, գգալիորեն ավելի եփեկտիվ մեքոդ—այստեղ մեկուսիչ թերթերը կտրատվում են ժապավենաձև սրոցով: Այս մեթոդը շատ բավելի հեշտ է ու եփան: Այն հեշտությամբ կարելի է ոգտադրոծել ամենուրեք, վորտեղ հարկավոր է մեկուսիչ նյութ կտրատել: Բայց իր հերթին լուսարձակների գործարանը, ինչպես և շատ ուրիշ գործարաններ, պետք է «Ելեկտրոսպարատ» գործարանից սովորի, թե ինչպես պետք է ծռել կաթսայի յերկաթի թերթերը: Այդ գործարանում ծռումը կատարվում է մի պարզ և եփան մեքենայի վրա, վորը հեշտությամբ կարելի է գնել ուզածդ գործարանում:

Ելեկտրոտեխնիկական ձեռնարկությունների ցեխերում մշակվում են հսկայական քանակությամբ զանազան դետալներ: Ֆրեզերային, չարխագործական, փականագործական աշխատանքներն այստեղ մեծ դեր են խաղում: Մինչդեռ մեխանիկական ու փականագործական մշակման առաջավոր ստախանովյան մեթոդները, այսինքն ընկ. ընկ. Գուդովի, Շվինենկոյի և մյուսների մեթոդները դեռևս շատ քիչ են տարածված Ելեկտրո-արդյունաբերության մեջ: Այնտեղ, վորտեղ այդ մեթոդները գործադրվում են, նրանք արդեն սովել են շատ զգալի եփեկտ: Լուսարձակների գործարանում, որինակ, չարխագործական դազդյահի վրա մեկ չբրջանակի մեջ սովորաբար տեղադրում է յին 5—6 դետալներ: Գուդովյան մեթոդների գործադրումը թույլ տվեց անցնել 60 դետալների միաթամանակ մշակելուն: Դեռևս նորերս գործարանում մեծ նվաճում էր համարվում, յերբ միաթամանակ մշակվում է յին 10 սուններ: Այժմ մշակվում են 200 ալդալիսի դետալներ, և այդ ոպերացիայի ժամանակ արտադրանքի նորմաների կատարումը հասել է 2400 տոկոսի:

Մենք որինակներ վերցրինք Ելեկտրոարդյունաբերությունից: Բայց համանման դրություն, մի փոքր ավելի լավ կամ ափելի վատ, գոյություն ունի մեր մեքենաշինության առանց բացառության բոլոր ճյուղերում: Ուզում էք վերցրեք դազդյահների արտադրությունը, գործիքների արտադրությունը, թե ծանր մեքենաշինության գործարանները, տրակտորների ու ավտոմոբիլների արտադրությունը—ամենուրեք միևնույն պատկերն է: Առաջավոր ստախանովյան փորձի մարդարտահատիկները, առաջավոր ստախանովյան տեխնոլոգիան արմատաւում են դեռևս չափազանց բույլ, վոր լավականաչափ լայն ճակատով:

Հարկ կա՞ արդյոք խոսելու այն մասին, թե ինչպիսի հսկայական ուղեւորներ են թաղեւած այդ բնագավառում: Հարկ կա՞ արդյոք խոսելու այն մասին, վոր առաջավոր ստախանովյան տեխնոլոգիան ուղադրով պայմաններ է ստեղծում զգալիորեն բարձրացնելու համար աշխատանքի արտադրողականությունն այն ձեռնարկություններում, վորտեղ այդ առաջավոր ստախանովյան տեխնոլոգիան կարմատացվի:

Առաջավոր ստախանովյան տեխնոլոգիայի արմատացումը անտեսական դեկավարների, ինժեներների, տեխնիկների, վարպետների, բրիգադիրների և արտադրության բոլոր հրամանատարների անմիջական պարտականությունն է: Ինժեներներն ու տեխնիկները, տեխնոլոգները, աշխատամասերի ու ցեխերի բրիգադիրները, գլխավոր ինժեներներն ու ձեռնարկությունների գերեկտորները պետք է պատվի գործ համարեն, վորպեսզի իրենց աշխատամասերում, բրիգադում, ցեխերում, ձեռնարկության մեջ արմատացվեն ու տեխնոլոգիական քարտում արձանագրվեն տեխնոլոգիական մշակման ամենակատարելագործված մեթոդները: Ձե՞ վոր մեղ մոտ չկա տեխնիկական գաղտնագործություն, այն խոցը, վոր մաշում է կապիտալիստական յերկրների տեխնոլոգիան: Ստախանովականի, ինժեների ու տեխնիկի սմեն մի նվաճում մեղ մոտ, մեր հասարակարգի չնորհիվ, հանդիսանում է մեր ամբողջ արդյունաբերության, մեր վողջ Ժողովրդի սեփականությունը: Մետաղի մշակման նոր, առաջավոր մեթոդներ գտնող լավագույն ստախանովականներն, ինժեներներն ու տեխնիկները բուռն ցանկություն ունեն իրենց գտած առաջավոր մեթոդը վորքան կարելի է լայնորեն տարածելու, անում են այն ամենը, ինչ անհրաժեշտ է, վորպեսզի անձնական որինակով, իրենց փորձը հագորդելով ոգնեն ընկերոջը կամ հարեան գործարանին, կամ հարեան ցեխին, աշխատամասին, բրիգադին՝ իրենց մոտ ևս կենսագործելու տեխնոլոգիական նորմությունը: Ուրեմն, բանն այն է, վոր անդուլ կերպով վորոնենք այդ նոր մեթոդները և, ստուգելով դրանք, առանց հապաղելու արմատացնենք արտադրության մեջ: Ձեռնարկությունները ինժեներներն ու տեխնիկները, գործարանի վարչա-տեխնիկական կազմը պետք է անդուլ կերպով վորոնեն ու գտնեն արտադրության կատարելագործված մեթոդներ:

Մեքենայական նոր տեխնիկան, վորով տեխնիկական խորը վերակառուցման հետեանքով ոժտվել են մեր ձեռնարկություն-

ները, տիրաւոր պահանջեց արտադրութեան տեխնոլոգիայի կա-
տարելագործումը: Յեւ այդ միանգամայն բնական է, քանի վոր
արտադրութեան տեխնոլոգիայի կատարելագործումը մեքենայա-
կան ինդուստրիայի տեխնիկական պրոգրեսի անհրաժեշտ պայ-
մանն ու հետեանքն է:

Մեր շատ գործարանները և տնտեսական կազմակերպութիւն-
ները ղեկավարներ բաժնեմասնակցութեան շնորհիւ ոգտագործում
նոր տեխնոլոգիայի արմատացման իրեն լիովին արդարացնող
յեղանակը—փորձի փոխանակման կարգով բրիգադներ ուղարկե-
լը: «Машиностроение» լրագրում բերվել են շատ փաստեր, յերբ
մի գործարանի ստանդարտիզացման իրերը, զաւրով հարեան,
ազգակից ձեռնարկութիւնը, գործնական կերպով ոգնել է ար-
մատացնելու տեխնոլոգիական նոր պրոցեսներ, վորոնք փոքր դեր
չեն խաղացել աշխատանքի արտադրողականութիւնը բարձրացնե-
լու բնագավառում: Ամեն մեկի համար պարզ է, թե մեր ձեռ-
նարկութիւններում ինչպես յայնորեն պետք է ոգտագործել փոր-
ձի փոխանակումն արտադրութեան առաջավոր տեխնոլոգիան ար-
մատացնելու համար միջոց պայքարում:

Արտադրութեան առաջավոր մարզիկ հետաքրքրութեամբ փո-
րոնում և զտնում են աշխատանքի արտադրողականութեան բարձ-
րացման նորանոր ձևեր: Դրա լայնագուն իլյուստրացիան է հան-
դիսանում բանվորների ու բանվորուհիների՝ բազմաթիւ դադ-
գյախների միաժամանակ սպասարկելու անցնելը: Բազմաթիւ դադ-
գյահները սպասարկումը կարող է հաջողութեամբ ռացիոնալացնել
տեխնոլոգիական պրոցեսները, յեթե տեխնոլոգներն ինչպես
հարկն է մասնակից դառնան այդ ուղադրով շարժմանը, իսկ ձեռ-
նարկութիւնները ղեկավարները բոլորէիկորեն ձեռնամուխ լինեն
նրանց ղեկավարման գործին: Այստեղ ամենից առաջ նկատի
ունենք բազմաթիւ դադգյահներ սպասարկելու ամենաեֆեկտիւ
մեթոդի մշակումը՝ դադգյահների տվյալ խմբի, ցետում աշխա-
տանքի տվյալ կոնկրետ պայմանների համեմատ: Դադգյահների
ամբողջ խմբի ամենաեֆեկտիւ աշխատանքին հասնելու առարկե-
ղում հսկայական դեր պետք է խաղան հարմարանքներն ու գոր-
ծիքը, աշխատատեղի կազմակերպումը, աշխատանքի ճիշտ բա-
ժանումը: Այս պայմաններում զգալիորեն բարձրանում է արտա-
դրութեան հրամանատարի և մասնավանդ տեխնոլոգի կազմակեր-
պող դերը:

Մինչդեռ արտադրութեան տեխնոլոգիան մեզանում հետ է

մնացել տեխնիկայի մակարդակից, և այդ հետ մնալը շատ հիմ-
նական աշխատանքներում արդեւակում է աշխատանքի արտա-
դրողականութեան հետագա բարձրացումը: Կարելի չէ առանց
չափազանցնելու ասել, վոր չկա մի այնպիսի գործարան, վորտեղ
ստանդարտիզացման մեթոդների գործադրումը առաջ չբերեր արտա-
դրութեան տեխնոլոգիայի բարելավում: Հարկավոր է պարզ հաս-
կանալ, վոր առաջավոր տեխնոլոգիայի արմատացումը միանալա
միջոցառում չէ: Այն սերտորեն կապած է տեխնիկական կուլ-
տուրայի զարգացման հետ, արտադրութեան վողջ կազմակերպու-
թեան բարելավման հետ, ռացիոնալիզատորական առաջարկների
և գյուտերի վնասակար արմատացման հետ: Իսկ տեխնոլոգիական
պրոցեսները վնասակար են բարելավելու ընդունակ վորքա՞ն
ուղադրով առաջարկներ ու գյուտեր կան, վորոնք անշարժ ընկած
են մեր շատ գործարաններում:

Տեխնոլոգիայի և արտադրութեան վողջ կազմակերպութեան
բարելավումը պահանջում է գյուտարարութեան և ռացիոնալի-
զատորական շարժման մաքսիմալ դարգացում: Լայն մասսաների
ստեղծագործ ափսոսանքի մոբիլիզացիան կապահովի արտա-
դրութեան տեխնոլոգիան վնասակար են բարելավելու համար
միայն մեր սրայքարի հաջողութիւնը:

IV. ԱՎԵԼԻ ԼԱՅՆ ԹԱՓ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՅԵՎ ՌԱՅԻՈՆԱԼԻԶԱՅԻԱՅԻՆ

Հիմնվելով ստալինյան յերկու հեղամյակների պատմական
նվաճումների վրա, մեր յերկիրը, Լենինի—Ստալինի կուսակցու-
թեան ղեկավարութեամբ, ապահովեց այն բոլորը, ինչ անհրաժեշտ
է ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերի տեխնիկական
սպասարկութեան հետագա զգալի աճման համար, արտադրու-
թեան տեխնոլոգիայի վողջ կազմակերպութեան հետագա վնասակար
բարելավման և գիտութեան ու գյուտերի նորագուն նվաճումնե-
րի լայն արմատացման համար:

Սոցիալիստական տեխնիկան կենսագործում է մարդու կողմից
բնութիւնը նվաճելու ամենապրոգրեսիւ յեղանակները: Միու-
թեան միասնական բարձրավոր ջանքը, աճուխների արդյունա-
բերական ստորերկրյա գազիֆիկացիան, արտադրական պրոցես-
ների ամրագործագրի և տեխնիկական տեխնիկական
վիթիարի այն պրոգրեսների, բոլորովին վոչ լրիւլ ցուցակը, վո-

բոնք գործնականորեն կենսագործվում են միայն մեր յերկրում, սոցիալիզմի յերկրում:

Բնորոշելով այն պայմանները, վորոնք թույլ են տալիս մեր յերկրին հասնելու տնտեսական անշեղ վերելքի, Վլադիմիր Իլյին լինելը գրում եր՝

«...տնտեսական վերելքի պայմանն է հանդիսանում նաև աշխատավորների կարգապահության, աշխատելու ունակության, աշխատանքի արդյունավետության, ինտենսիվության, նրա ավելի լավ կազմակերպման բարձրացումը»¹:

Լենինի գործը չարունակող Ստալինի ղեկավարությամբ մեր յերկրում սոցիալիզմի տարած պատմական հաղթանակները ստեղծեցին բոլոր անհրաժեշտ պայմանները յերկրի անընդհատ տնտեսական վերելքի համար: Լիովին կենսագործվեցին Լենինի սրբանշանները: Սոցիալիզմի հաջողությունների հիման վրա մեզ մոտ ծնվեց և վողջ յերկրովը մեկ հորդաուստ հեղեղի նման տարածվեց համաժողովրդական ստախանովյան շարժումը, վորը ցույց տվեց խորհրդային սխտեմի բացառիկ հնարավորությունները:

Կարգապահության մասին, աշխատելու ունակության մասին, աշխատանքի ինտենսիվության և կազմակերպման մասին Վլադիմիր Իլյին Լենինի ասած անմոռանալի խոսքերն ամենից ավելի վառ մարմնացում գտան ստախանովյան շարժման մեջ: Ստախանովյան շարժումը, մեր ժամանակի աշխարհային հանգրվանում է նաև խորհրդային ժողովրդի ստեղծագործական վիթխարի նախաձեռնության մեծագույն ասպարեզը: Մասսայական գյուտարարությունը և ռացիոնալիզացիան ստախանովյան շարժման բնորոշ գիծն է: Մեր խորհրդային գիտությունը յերկրագնդի վրա ամենաառաջավոր գիտությունն է հանդիսանում վոչ միայն այն պատճառով, վոր աշխարհում և վոչ մի տեղ չկան գիտության աշխարհի ականջի վործիչներ, վորքան մեկ մոտ, այլ գլխավորապես այն պատճառով, վոր խորհրդային գիտության ներկայացուցիչներն ամենասերտ կերպով կապված են ամբողջ ժողովրդի հետ:

Հարյուր-հազարավոր ստախանովականներ հանդիսանում են գիտության ականավոր նշանավորներ: Ընդհանրացնելով սոցիալիստական շինարարության բոլոր տեղամասերում ստախանովականների կուտակած վիթխարի գործնական փորձը, խորհրդային

ինտելիգենցիան նոր ուժեր և ձեռք բերում համարձակ լուծելու այն պրոբլեմները, վորոնք առաջանում են սոցիալիզմից դեպի կոմունիզմ անցնելու պայմաններում: ԽՍՀՄ մեջ տեխնիկական ստեղծագործության համար անծայրածիր հնարավորություններ կան: Հայրական սիրով և թափանցիվ կուսակցության ու կառավարության և անձամբ ընկեր Ստալինի հոգացողությունը դեպի մեր գյուտարարներն ու ռացիոնալիզատորները, վորոնք պայքարում են արտադրողականության հետագա բարելավման համար, մեր ժողովրդական տնտեսության մեջ ամենաառաջավոր տեխնիկական արձատացնելու համար: Իսկ չե՞ վոր մեր յերկրում, վորտեղ անսպառ են ներարդյունաբերական ռեզերվները, գյուտարարների ու ռացիոնալիզատորների համար գործունեության լայնարձակ դաշտ կա:

ՀամԿ(Բ)Կ XVIII համագումարում արած իր ղեկուցման մեջ խորհրդային կառավարության ղլուխ ընկեր Մոլոտովը հիանալի կերպով ասաց.

«Մեզանում դեռ վորքան չօգտագործված տեխնիկա կա, դեռ վորքան հիանալի սարքավորում յերկար ժամանակ պարապ, պետության համար անօգուտ կանգնած է մնում: Այս մասին վոչ մի կերպ չի կարելի մոռանալ, ինչպես և չի կարելի մոռանալ գյուտների և ռացիոնալիզատորական միջոցների լավագույն օգտագործումից ստացվող մեծ ռեզերվները: Մեզանում յերևան կզան նոր, հսկայական ռեզերվներ, հենց վոր մենք իսկական հոգատարություն ցուցաբերենք մեր բազմաթիվ գյուտարարների, ռացիոնալիզատորների ու նրանց ռեզերվների մասին: Հարկավոր է ակտիվ կերպով, նյութական ու հասարակական միջոցներով խրախուսել և առաջ մղել աշխարհում, ինչպես աշխարհում սովորեցնում է ընկեր Ստալինը»:

Յե՛վ իսկապես: Տեխնիկական կատարելագործությունները և ռացիոնալիզատորական առաջարկները յուրաքանչյուր տարի տալիս են վիթխարի տնտեսական Էֆեկտ, վորոնք հաշվվում են տասնյակ միլիոն ռուբլիներով: Բավական է ասել, որինակ, վոր միայն Ծանր մեքենաշինության ժողովրդական կոմիսարիատի գործարաններն անցյալ տարի տվեցին մոտ 30 միլիոն ռուբլու խնայողություն՝ բանվորների, ինժեներների և տեխնիկների գյուտերը և ռացիոնալիզատորական առաջարկներն իրացնելու:

Վիթխարի տնտեսական ու տեխնիկական Էֆեկտ տվեցին 381

¹ Լենին, հատ. XXII, հայ. հրատ., էջ 590, 1932 թ.:

առաջարկներն այն 547 առաջարկների թվից, վոր մտցրել էին անցյալ տարի «Ֆրեզեր» գործարանի աշխատողները: Որինակ, չատ հետաքրքիր և հավաքածո ֆրեզների դանակին արագահատ թիթեղներ դրելու այն յեղանակը, վորն առաջարկել են «Ֆրեզեր» գործարանի աշխատողներ ընկ. ընկ. Միլցլինը և Մանկովը: Այս յեղանակի արմատացումը պակասեցրեց գործարանում արագահատ պողպատի ծախսը տարեկան 10 տոննով: Այս առաջարկների իրացումը մեծացրեց աշխատանքի արտադրողականությունը 7—10 անգամ:

Հրաշալի արդյունքներ և տարիս Սերգո Որջոնիկիձէյի անվան չքանչանակիր Ուրալմաշ գործարանի բանվորների, ինժեներների և ծառայողների ռադիոնալիզատորական առաջարկների և գյուտերի արմատացումը: Այս տարվա չորս ամիսների ընթացքում աշատեղ արմատացվել են գրեթե նույնքան առաջարկներ, վորքան անցած ամբողջ տարվա ընթացքում:

Այնտեղ, վորտեղ անտեսական ղեկավարները, կուսակցական ու պրոֆմիութենական կազմակերպությունները բավարար ուշադրությամբ են հատկացնում բանվորական գյուտարարությունը, մենք հրաշալի արդյունքներ ունենք աշխատանքի արտադրողականություն համար միշտ պայքարում: Մի՞թե ուրախալի չէ այն փաստը, վոր «Կալիբր» գործարանում, որինակ, յուրաքանչյուր հինգ բանվորից մեկը մասնակցում է ռադիոնալիզատորական աշխատանքին: Ձարմանալի՞ յե արդյոք, վոր այդ գործարանում միայն ռադիոնալիզատորական առաջարկների արմատացումից 1938 թ. ձեռք բերեցին 750 հազար ուրբու խնայողություն:

Ահա թե ինչ է պատմում ընկ. Լյուբիմովը իր վորոնումների ու տեխնիկական ստեղծագործության մասին. «1938 թ. վերջին յես ձեռնամուխ յեղա ավտոմատիկ հորատման համար հասարակ, հեշտ ու ձեռնահարմար հարմարանքի պատրաստմանը: Առաջին կառուցվածքն անհաջող եր՝ մեխանիկական շարժական կանգնակը հարկ յեղած արդյունքը չտվեց: Այն ժամանակ այդ հարցի լուծմանը յես մոտեցա այլ կերպ—գործադրեցի պնեւմատիկ կանգնակ: Լուծումը ճիշտ դուրս յեկավ:

Յես հակիրճ կնկարագրեմ ավտոմատույց գործիքի կառուցվածքը: Այդ գործիքն ամրացվում է պնեւմատիկ թեթև սյունակի վրա (նրա քաշը 11 կիլոգրամ է) և կազմված է ամբողջաքաշ

բարակ պատեր ունեցող յերկու խողովակներից: Ավելի փոքր տրամագծով մի խողովակը ծառայում է վորպես մխոց: Խողովակների ծայրերը խլացված են կոնուսներով, վորոնք թույլ են տալիս, վոր սյունակը պտտվի իր առանցքի շուրջը, և նրան բավականաչափ կայունութուն են հաղորդում: Ավտոմատույց գործիքը սյունակի վրա ամրացվում է անուրներ ունեցող հատուկ սկավառակներով: Նա հեշտորեն տեղափոխվում է վեր ու վայր և տեղակայվում է ցանկացած անկյան տակ: Սյունակը մեկ անգամ տեղակայելով, կարելի յե հորատել 6—8 չափը:

Ողն ավտոմատույց գործիքին մոտեցնում են 9—12 միլիմետրանոց ռեդիոնափողակի ոգնությամբ, վորը մխացված է հատուկ բաշխիչ տուփի հետ և սա ել իր հերթին ամրացված է անմիջորեն պերֆորատորին: Ողի ճնշումը կանոնավորվում է հատուկ վենտիլով:

Իմ առաջարկած ավտոմատույց գործիքի կառուցվածքն ունի թեթև քաշ և պարզ է չահագործման մեջ: Նրա տեղակայումը խլում է ընդամենը 5—6 բուլետ: Աշխատելով յերկու պերֆորատորով, հորատողը, տեղակայելով մեկ ավտոմատույց գործիքը, անցնում է մյուսին և կատարում է միևնույն վոչբարդ ոսկերացիան: Հորատումը կատարվում է ավտոմատիկ կերպով: Այժմ հանքափորին հարկ չի լինում շատ ջանք վատնել՝ պերֆորատորը ողի մեջ կախված պահելու, ուսով նրան նեցուկ պահելու և այլն: Հանքահատը վոչ մի ցնցում չի գգում, վորը լինում էր առաջ, մինչև ավտոմատույց գործիքի գործադրումը: Իսկ արդյունքը լինում է այն, վոր այդ ամենն զգալիորեն բարձրացնում է արտադրողականութունը, առողջացնում է աշխատանքի պայմանները: Աճում է և աշխատավարձը:

Մեր կողմից հանքարանային արհեստանոցում պատրաստված են ավտոմատույց գործիքի առաջին ուղինակները: Հորատողներն այդ գործիքը յուրացրեցին արդեն առաջին 3 օրը: Շուտով վեց հորատողներից բրիգադում մնացին միայն յերեքը: Նրանք հեշտությամբ գլուխ են հանում աշխատանքից և զգալիորեն գերակատարում են նորման»:

Մասնաշաղկան ստախանովյան շարժման զարգացման վոչ պակաս դործուն գեներն են հանդիսանում ստախանովյան դպրոցները՝ անմիջապես ձեռնարկություններում, աշխատատեղերի մոտ: Այդ դպրոցներն իրենցից ներկայացնում են լայն մասսաներին առաջավոր, ստախանովյան փորձը հաղորդելու ամենից ավելի եֆեկ-

տիւմ ձևը: Անմիջապես դադարեցի մոտ փորձառու ստախանովա-
կան բանվորն ակնառու ձևով ու գործնականորեն սովորեցնում է
գործարան նոր յեկած բանվորին աշխատանքի ստախանովյան մե-
թոդը, ոգնում է նրան արագորեն յուրացնելու ստախանովականե-
րի աշխատանքի մեթոդները: Դրանումն է ստախանովյան դըպ-
րոցների ելությունը: Վերջին ժամանակներս ստախանովյան
փորձի հաղորդման այդ ձևն ավելի ու ավելի մեծ չափով է տա-
րածվում Փարբիկաներում ու գործարաններում: Վորպես որինակ
կարող է ծառայել Որջոնիկիձեյի անվան Ուրալի մեքենաշինա-
կան գործարանը, վորտեղ 1938 թ. կար 80 ստախանովյան դըպ-
րոց, իսկ 1939 թ.՝ արդեն 127-ը:

Ինչպես է կազմակերպվում ուսուցումն ստախանովյան
դպրոցներում: Որջոնիկիձեյի անվան Ուրալի մեքենաշինական
գործարանում գոյություն ունի ինժեներների փորձի փոխանակ-
ման հատուկ ինստիտուտ, վորոնք զբաղված են ստախանովա-
կանների աշխատանքի մեթոդներն ուսումնասիրելով: Փոր-
ձի փոխանակման գծով աշխատող ինժեները կանխապես խնամ-
քով ծանոթանում է ստախանովյան դպրոցի այս կամ այն դեկա-
վարի աշխատանքի մեթոդի հետ և միաժամանակ հայտարարում
է ցեխում յեղած «նեղ» տեղերը, վորտեղ այդ մեթոդներն ան-
հրաժեշտ է գործադրել առաջին հերթին: Ինժեների ոգնությամբ
ստախանովականը ձեռնամուխ է լինում դպրոցի ղեկավարմանը:
Ձեկուցումը նախապատրաստելու, նյութեր համակարգելու (աշ-
խատանքի ստախանովյան մեթոդների նկարագրություն, եսքիզնե-
րի, ֆոտո-նկարների պատրաստում և այլն) ասպարեզում ստա-
խանովականներին ոգնելու համար քամրացվում է ինժեներ կամ
տեխնիկ: Յերը դպրոցի ստախանովական-ղեկավարը բավականա-
չափ պատրաստվեց, նա ղեկուցումով հանդես է գալիս նույնա-
տեսակ պրոֆեսիայի մի խումբ բանվորների առաջ և պատմում
է նրանց աշխատանքի իր մեթոդների մասին:

Ահա թե ինչպես է իր ընկերներին աշխատանքի ստախանո-
վյան մեթոդներ սովորեցնում Կոլչազինսկի գործարանի ստախա-
նովյան դպրոցների նախաձեռնող ընկ. Կոկորինը.

«... Յես սկսեցի յերիտասարդ բանվորներին սովորեցնել աշ-
խատանքի ստախանովյան մեթոդներ, — պատմում է ընկ. Կո-
կորինը: — Ուսուցումը ղեկավարում եր ցեխի պետ ընկ. Լոգի-
նովը: Նա կոնսուլտանտ եր, իսկ յես՝ դասատու: Նա ինձ ոգնեց
կազմելու զրույցների պլանը, պարզելու խրոնոմետրափի նյութե-

րը: Այդ նյութերը ցույց ելին տալիս, թե վորքան ժամանակ եմ
յես ծախսում յուրաքանչյուր ոպերացիայի վրա: Ուսուցումը
կատարվում եր աշխատանքից հետո: Սկզբում յես պատմեցի,
թե ինչպես եմ աշխատում, բացատրեցի իմ մեթոդը և ապա հենց
այստեղ, ցեխում ցույց ելի տալիս իմ մեթոդը դադարեցի վրա:
Յուրաքանչյուր բանվորի յես սովորեցնում ելի մի հնդորյակի
ընթացքում: Վորպես քննություն ծառայում եր պլանի կատար-
ման տոկոսը:

Մոսկվայի «Կրասնի պրոլետարի» դադարահանական գործա-
րանի կոմսոմոլի կազմակերպությունը գործարանի ստախանովա-
կանների, ինժեներների, տեխնիկների և ծառայողների հետ միա-
սին ի հավերժացումն ստախանովյան շարժման 4-րդ տարեդար-
ձի կազմակերպում է վոչ պակաս, քան 100 ստախանովյան
դպրոցներ: Այդ դպրոցներում անցկացվող պարապմունքներում
առաջին հերթին կներգրավվեն այն բանվորները, վորոնք այժմ
նորմաները չեն կատարում:

Կրասնոպրոլետարցիները վորոշել են ուսուցումը ստախանո-
վյան դպրոցներում կազմակերպել այնպես, վորպեսզի ստախա-
նովյան յուրաքանչյուր դպրոցում սովորեն միևնույն մասնագի-
տություն ունեցող 3—4 մարդ: Պարապմունքները պետք է տեղի
ունենան անմիջապես աշխատատեղերում՝ աշխատանքի ժամերից
դուրս: Դպրոցները պետք է ղեկավարեն ցեխերի լավագույն ստա-
խանովականները: Նրանց մեջ է Լենինի չբանչանով պարզեա-
տրված ծակող ընկ. Վորոնիովը, վորը մի հերթափոխում կատա-
րում է — յերեք-չորս նորմա. յերիտասարդ փականագործ ընկ.
Իլիլերինը, վորը սխտեմատիկորեն կատարում է յերկու նորմա.
Փրեզորդ ընկ. Միրոնովը, վորը հանդիսանում է «Կրասնի պրո-
լետարիում» յուզովյան մեթոդների արմատացման նախաձեռ-
նողը. փականագործ կոմյերիտական ընկ. Սալիչովը, վորը կա-
տարում է յերեք նորմա, և ուրիշները: Բացի խիստ փորձված
առաջավոր բանվորներից յուրաքանչյուր դպրոցին, կոնսուլտա-
ցիայի համար, կցվում են տեխնոլոգներ և վարպետներ:

Բնական է, վոր ստախանովյան դպրոցներում գործի այսպի-
սի կազմակերպման ժամանակ վոչ միայն հետ մնացող բանվոր-
ները, այլև ստախանովականներն ու հարվածայինները կարող են
ձեռք բերել նոր գիտելիքներ ու հմտություններ, կարող են հաս-
նել ե՛լ ավելի բարձր արտադրողականության և արտադրանքի
ավելի լավ վորակի:

Այն մասին, թե ինչպիսի դործուն արդյունքներն յեն հասնում ստախանովյան դպրոցներն ղեկավարները, ակնառու կերպով նկատելի յե հուլյրիչնի անվան Մոսկվայի տրանսֆորմատորային գործարանի փաթաթող Մարուսյա Բլինկովայի՝ ստախանովյան դպրոցում տարած աշխատանքի որինակից։ Պայքարելով տառացիորեն յուրաքանչյուր վայրկյանի խնայողության համար, ընկ. Բլինկովյան կարողացավ համատեղել ժամանակի տեսակետից յերեք ուղերայիններ՝ ծայրային մեկուսացում մտցնելը, մեկուսացումը խավերի մեջ անցկացնելը և պտուտակներ փաթաթելը։

Անցյալ տարի և այս տարվա սկզբին նոր բարձրավոր տրանսֆորմատորների յուրացման ժամանակ ընկ. Բլինկովյան անցկացրեց տեխնոլոգիական պրոցեսի հետագա ռացիոնալիզացիա։ Նա առաջարկեց մեկ դադգյահի վրա փաթաթել յերեք տարբեր տրամատների պղինձ։ Դրա շնորհիվ նա հասավ բարձր արտադրողականության—նորմայի 600 տոկոսին։

Արդեն 1930 թ. սկսած ընկ. Բլինկովյան իր փորձը սխտեմատիկաբար հաղորդում է նորեկներին և հետ մնացող բանվորներին։ Սովորեցնելով բանվորներին 2—3 հոգուց բաղկացած խմբերով, նրանց անմիջապես դադգյահի մոտ ցույց տալով (սովորաբար ճաշի ընդմիջման ժամանակ կամ աշխատանքից հետո), թե ինչպես է հարկավոր պատրաստել աշխատատեղը, ինչպես պետք է ավելի լավ դասավորել գործիքներն ու նյութերը, ինչպես մաքուր պահել դադգյահը, չափել պղինձը, նա դարձավ ստախանովյան դպրոցի հիմնալի ղեկավար և ցեխի տասնյակ բանվորների սովորեցրեց աշխատանքի իր պրիոմները, հաղորդեց իր փորձն ու գիտելիքները։

Այս տարի պարապմունքները ստախանովյան դպրոցում ընկ. Բլինկովյան անց է կացնում արդեն վորոշ պլանով։ Մշակված է ծրագիր, դպրոցին ամրացված է ինժեներ-կոնսուլտանտ, կարգավորված է ուսուցման հաշվառումը, կազմակերպված է դպրոցում ստացվող գիտելիքների պրակտիկ ստուգում և այլն։ Այս ամենն ընկ. Բլինկովյան հնարավորութուն է տալիս ավելի ևս եփեկալի կերպով ղեկավարելու դպրոցը, ավելի ևս արագ պատրաստելու արտադրության առաջավորների կադրեր։

Ստախանովյան դպրոցների ելությունը պատկերավոր ու գունեղ կերպով շարադրել է Ալեքսեյ Ստախանովն իր՝ «Առաջավոր կոլչուգինյան բանվորների փորձի մասին» հոդվածում, վորը տպագրվել է «Правда»-յում։

«Ընկեր կոլչուգինցիները պատմում են, վոր դադգյահի մոտ դպրոց ստեղծելով,—գրում է ընկ. Ստախանովը,—նրանք շատ րան ձեռք բերին, և այն մարդիկ, վորոնք առաջ չէին կատարում կամ հաղիվ էին կատարում նորմաները, սկսեցին այդ նորմաները գերակատարել։ Այդ մեծ, լավ գործ է, վորը հարկավոր է վողջունել և ամեն կերպ պաշտպանել։

Յես նույնպես հանքավորի առաջին գիտելիքները ձեռք բերի վոչ թե ուսումնարանում, այլ ընկերների մոտ, վորոնք իմ մեջ սեր առաջացրին դեպի հանքավորի մասնագիտությունը։ Յես մշտապես խորը շնորհակալությամբ եմ հիշում իմ ուսուցիչներին։ Յես հանքահոր յեկա գյուղից։ Այն մասին, թե ինչպես է ստացվում ածուխը, յես վոչ մի պատկերացում չունեյի։ Հանքահորի մոտ յես նկատեցի մի խողովակ, և ինձ թվում էր, վոր նա գալիս է յերկրի բուն խորքից և վոր հենց նրա ողնությամբ են ածուխ ստանում։ Առաջին անգամ գետնի տակ իջնելով, յես գլուխս կորցրի։ Չորս կողմը խավար, միայն յերբեմն-յերբեմն առկայծում են շախտյորական լապտերների աղոտ լույսերը։ Ինձ թվում էր, վոր յես յերբեք չեմ կարողանա սովորել ածուխ կղտրելը։

Բայց ահա ինձ մոտ հայտնվեցին ընկեր-ուսուցիչներ, վորոնք ինձ անմիջաբար հանքահորում հասկանալի կերպով ամեն ինչ բացատրեցին։ Իմ ազդանվանակից Ստախանով Ռոմանը մանրամասն պատմեց, թե ինչ րան է հանքահորը, և սովորեցրեց, թե ինչպես պետք է աշխատել վորպես արգելակող։ Արտելորդ Պետրուշինը բացատրեց, թե ինչպես է կատարվում հորատելն ու փլցնելը հանքում։ Տասնապետ Մոլչանովը ցույց տվեց, թե ինչպես պետք է կատարել թործումը (подбойка) և ինչպես պետք է ճանաչել ածուխի դասավորությունը։ Անմիջապես հորի մեջ ինձ ցույց էյին տալիս, թե ինչպես պետք է աշխատել քլունգով, իսկ հետո, յերբ յերեան յեկան հանքահատ մուրճները,—թե ինչպես է հարկավոր աշխատել մուրճով։ Այդ իմ առաջին դպրոցն էր։ Յեթե չլինեք այդ դպրոցը, յես հավանաբար յերբեք չէյի դառնա հանքավոր և չէյի կարող կատարել ու գերակատարել նորմաները»։

Ստախանովյան դպրոցները կոչված են վճռական դեր խաղալու բրիգադները, աշխատամասերը, ամբողջ ցեխերը արագորեն ստախանովյան դարձնելու ասպարեզում։ Ստախանովյան աշխատանքի, դեպի դադգյահը, դեպի մեքենան ցուցաբերվող

ստախանովյան վերաբերմունքի, աշխատատեղի ստախանովյան կազմակերպման բոլոր նոր մեթոդներն ու ձևերը կարող են և պետք է հաջողութեամբ ուսումնասիրվեն անմիջապես ստախանովյան դպրոցներում:

Ստախանովյան աշխատանքի հրաշալի ձևը—բաղձաթիվ դադգյաճների սպասարկումը—ավելի ու ավելի մեծ թվով գործարաններ եր թափանցում: Սարկովի Մոլոտովի անվան դադգյա-հաշինարան գործարանում C-5 ցեխի (միջին դետալների ցեխ) Ֆրեզերներ ընկ. ընկ. Բրեգլերը, Նազարովը և Չառսովը ատամնափոր դադգյաճի վրա աշխատող կոմունիստ ընկ. Կոստենկոյի որինակով ցեխում առաջինն անցան բաղձադադգյաճ աշխատանքի: Նրանցից յուրաքանչյուրն սկսեց միաժամանակ աշխատել վեց դադգյաճի վրա:

Ահա, որինակ, Ֆրեզերը ընկ. Նազարովի աշխատորը: Մինչև նրա ցեխ դալը պլանավորող ընկ. Մոխեյենկոն վաղորոք ապահովում է դադգյաճները դետալներով: Աշխատանքն սկսելուց մի քանի րոպե առաջ ընկ. Նազարովը բեռնավորում է ատամնափոր դադգյաճը, վորի վրա մշակվում են տրավերսի ամբարձիկի վինտերը (մեկ վինտը դադգյաճի վրա մշակվում է 2 ժամվա ընթացքում), այնուհետև բեռնավորում է շրջֆրեզերային դադգյաճներին մեկը, վորի վրա մշակման համար դրվում է շրջային գլանը:

Այդ գլանի մշակման ցիկլը շարունակվում է 40 րոպե: Մեկ օեյկա մշակելու համար գնում է 30 րոպե: Մնացած յերկու շրջֆրեզերային դադգյաճները բեռնավորվում են կարճ արագության գլանների մշակումով, դադգյաճներից մեկի վրա դրվում է 300 միլիմետր յերկարութեամբ գլան, վորի մշակման համար պահանջվում է 25 րոպե, իսկ յերկրորդի վրա—180 միլիմետր յերկարութեամբ գլան (մշակման ցիկլը 15 րոպե): Վերջապես, վեցերորդ դադգյաճի (ատամնափոր) համար ընտրվում են մշակելու համար ժանանիվափոր գլաններ: Ընկ. Նազարովի մոտ ամբողջ նախապատրաստութեան համար գնում է 25 րոպեից վոչ ավելի: Վերջացելով դադգյաճների բեռնավորումը, ընկ. Նազարովը հաջորդաբար հետևում է մշակման ընթացքին, մեկ դադգյաճից մյուսին անցնելով:

Բաղձադադգյաճ սպասարկումը, սարքավորումը, գործիքներն ու հարմարանքներն որինակելի կերպով խնամելը, օացիոնալիզատորական ձեռնարկումների արմատացումը—այս ամենը կարող

է մեծ եֆեկտիվութեամբ հաղորդվել գործարան նոր յեկած բանվորներին ստախանովյան դպրոցներում:

Ստախանովյան դպրոցները բանվորի ուսուցման սկիզբն են միայն. այս դպրոցներում նա ակնառու կերպով և գործնականորեն ստանում է դադգյաճի մոտ աշխատելու համար իրեն անհրաժեշտ ունակութեւններն ու գիտելիքները: Հետագայում բանվորը, պատրաստվելով տեխնիկումի դպրոց, արտադրական դասընթացներ և այլն մտնելու համար, կկարողանա այնքան ավելի առաջադիմել ուսման մեջ և այնքան ավելի արագ առաջ շարժվել, վորքան ավելի լավ և ավելի հիմնավոր կսովորի նա ստախանովյան դպրոցում:

VII. ՆՈՐ ՏԵԽՆԻԿԱ.—ՆՈՐ ՆՈՐՄԱՆԵՐ

Ստալինյան յերկու հնգամյակների ուշագրավ արդյունքներից մեկը հանդիսանում է ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերի տեխնիկական վերակառուցման ավարտումը, վորն էլ ավելի յե արագացնում մեր առաջխաղացումը կոմունիզմի կառուցման ճանապարհով:

Այն փոփոխութեւնները, վորոնք վերջին յերկու տարվա ընթացքում տեղի ունեցան մեր ձեռնարկութեւններում,—սրանց հետագա հազեցումը նոր տեխնիկայով, արտադրական պրոցեսի ավելի օացիոնալ կազմակերպումը, տեխնիկական հին նորմաները խորտակող ստախանովյան շարժման հաջողութեւնները թույլ տվին 1939 թ. հունվարին վերանայել նորվանքն ու գնահատումները մեքենաշինական ու պաշտպանական արդյունաբերութեան վեջ: Հին նորմաները, վորոնք արգելակ էին դարձել աշխատանքի արտադրողականութեան հետագա բարձրացման համար, փոխարինվեցին մեր արտադրութեան մակարդակին, մեր տեխնիկայի մակարդակին ավելի համապատասխան նոր նորմաներով:

Այն նորմաները, վորոնք հիմնված են արտադրութեան հետամնաց տեխնիկայի, աշխատորը վոչ լրիվ ոգտագործելու, առաջավոր տեխնոլոգիային անհամապատասխան պրոցեսների վրա, վոչ միայն չեն կարող վորպես լծակ ծառայել աշխատանքի արտադրողականութեան հետագա բարձրացման համար, այլև աշխատանքի արտադրողականութեան հետագա ավելացման արգելակ են դառնում:

Հենց այդպես սնանկ, վնասակար են դարձել ներկայումս

այն տեխնիկական նորմաները, վորոնք մշակվել են և գործում են յնչիս ավելի քան յերկու տարի սրանից առաջ:

Տեխնիկական նորմաների հետամնացութունը քիչ չողտա- գործեցին ժողովրդի ստոր թշնամի տրոցկիստական-բուխարինա- կան և այլ վնասարարներն ու դիվերսանտները: Ժողովրդի ջախ- ջախված թշնամիները փորձում էին ամեն կերպ խառնել նոր- մավորումը, ձգտելով հիմնել վոչ թե տեխնիկական հիմնավոր- ված, այլ աշխատանքի կոչված փորձնական-վիճակագրական նորմա- ներ, վորոնք իջեցնում են արտադրական կարողութունները, թույլ չեն տալիս հայտարարել արտադրութան ներքին ուղեղ- ները և ուղղակի վիժեցնում են աշխատանքի արտադրողականու- թյունը բարձրացնելու համար մղվող պայքարը:

Արդյունաբերության մեջ նորմաների ու դնահատումների՝ ստախանովական ու հարվածային բանվորների, ինժեներների ու տեխնիկների մասնակցությամբ անցկացված վերանայումը մեծ չափով ոգնեց նոր ուղեղվներ հայտարարելու՝ աշխատանքի ար- տադրողականությունը բարձրացնելու համար: Նորմաները վերա- նայելու պրոցեսում գործարանների աշխատողները մտքին ու- ցիտնալիզատորական տասնյակ-հազարավոր առաջարկներ, վո- ռոնք բարելավում են տեխնոլոգիան, ապահովում են աշխատատեղի որինակելի կազմակերպումը, կրճատում են արտադրական ցիկլը, բարելավում են արտադրանքի վորակը: Նորմավորման գործի նշանակութունը դժվար է գերազնահատել:

«Պլանային տնտեսությունն,—ասում էր ընկեր Ստա- լինը Ստախանովականների Համամիութենական առաջին խորհրդակցությանը 1935 թ. նոյեմբերին,— անհնարին է առանց տեխնիկական նորմաների: Բացի այդ, տեխնի- կական նորմաները հարկավոր են նրա համար, վորպեսզի հետ մնացող մասսաներին հասցնենք առաջավորներին: Տեխնիկական նորմաները կարգավորող մեծ ուժ են, վո- ռոնք արտադրության մեջ բանվորական լայն մասսաներին կազմակերպում են բանվոր դասակարգի առաջավոր տար- րերի շուրջը»:

Ընկեր Ստալինի այս խոսքերը—սոցիալիստական արդյունա- բերության մեջ նորմավորման ամբողջ գործի խնդիրներն ըմ- բռնելու բանալին են:

Ահա թե ինչու կուսակցությունն ու կառավարությունն այդ- պիսի հսկայական խնամքով ապահովեցին նորմաների վերանայ-

ման նախապատրաստումն ու անցկացումն այն հաշվով, վոր- պեսզի նրանց հասցնեն մեր տեխնիկայի մակարդակին:

Այդ հնարավոր դարձավ այն պատճառով, վոր յերկերը վե- րականգնեց ու նորոգեց սարքավորումը, գործի դրեց տասնյակ- հազարավոր դաղբյահներ և այդ դաղբյահներն ոժտեց նոր տեխ- նիկայով:

Այդ հնարավոր դարձավ այն պատճառով, վոր ստալինյան հնգամյակների տարիներում զգալիորեն բարձրացավ բանվորների վորակավորումը, լայն ծավալեց սոցիալիստական մրցակցու- թյունը և նրա բարձրագույն ձևը—ստախանովյան շարժումը:

Այսպիսով, աշխատանքի արտադրողականության հետագա մեծացման ասպարեզում կենսական անհրաժեշտություն դարձավ տեխնիկական հիմնավորված նորմաների սահմանումը, նորմա- ներ, վորոնք համապատասխանում են ձեռնարկությունների տեխ- նիկական զինվածության մակարդակին, արտադրության կազմա- կերպմանն ու տեխնոլոգիային:

Ինչպես հայտնի յե, նորմաները մեզ մոտ չեն լին վերանայվել ավելի քան յերկու տարի: Մինչդեռ ամեն վոք, ու թիչ թե շատ ծանոթ է մեր ձեռնարկություններին, զիտե, թե ինչպիսի վիթ- խարի փոփոխություններ են տեղի ունեցել այդ ձեռնարկու- թյուններում այս ժամանակի ընթացքում: Վոչ միայն նոր կա- ուցցված գործարաններում, այլև նույնիսկ այսպես կոչված հին ձեռնարկություններում գործի դրված նոր սարքավորումը մեծ չափով կատարելագործել է արտադրական պրոցեսը, վորը քանի գնում այնքան ավելի յե կառուցվում հարահոս արտադրության տիպով: Բայց ամենագլխավորն այն է, վոր վերջին տարիների ընթացքում հսկայական չափով տարածվեցին աշխատանքի ստա- խանովյան մեթոդները, վորոնք մեծ չափով բարձրացնում են աշխատանքի արտադրողականությունը:

Լայնորեն հայտնի յեն բազմաթիվ դեպքեր, յերբ բանվորնե- րը գերակատարել են նորմաները հազար և ավելի տոկոսով: Մե- քենաշինական ձեռնարկությունների զգալի մասում նորմաների միջին կատարումը հասնում էր 180 տոկոսի, իսկ ամբողջ մեքենա- շինական արդյունաբերության մեջ—151,6 տոկոսի:

Անհրաժեշտություն չկա յերկար-բարակ ապացուցելու, վոր գոյություն ունեցող նորմաները հնացել էին և ուղղակի արդե- լակ էին դարձել աշխատանքի արտադրողականության հետագա աճման համար: Կանգ առնենք միայն մի քանի բնորոշ որինակնե-

ընդ որում, վորոնք ակնառու կերպով ցույց են տալիս, վոր մինչև 1939 թ. հունվարի 1-ը գործող Հին նորմաներն անհամապատասխան են մեր տեխնիկայի նոր մակարդակին:

Այսպես, Որջոնիկիձեյի անվան դադգյա հազործարանում (Մոսկվա) վորոնքիման աշխատամասի № 2 ցեխում մշակվում է «23-3025» գետալը: Այդ գետալի մշակման նախկին նորման 95 հատ էր, իսկ բանվորները մի հերթափոխում մշակում էին 117 հատ: Այժմ նորման գերադասարկում է գրեթե չորս անգամ շնորհիվ այն բանի, վոր գետալի մշակման պրոցեսը ռացիոնալիզացրել են: Պարզ է, վոր այդ ռացիոնալացում հարկավոր էր մտցնել նոր նորմաներ, վորոնք խթանեյին աշխատանքի արտադրողականության հետագա բարձրացումը:

Բայց ահա մի այլ օրինակ: Կիրովի անվան «Ելեկտրոսիլա» գործարանի Փրեգերային № 2 ցեխի ստախանովական ընկ. Գոմոնը յերկու տարի յե ահա, ինչ աշխատում է խողանակաղանների ֆրեզման վրա:

«Տեխնոլոգիական պրոցեսն այդ յերկու տարվա ընթացքում, —ասում է ընկ. Գոմոնը,—միանգամայն փոխվել է: Հետևանքը յեղել է այն, վոր խողանակաղանը պահանջում է յերեք անգամ ավելի պակաս ժամանակ, քան յերկու տարի սրանից առաջ»:

Իսկապես, այդ ցեխում ստացվորեն՝ չկա վոչ մի դետալ, վորը մշակվեր այնպես, ինչպես յերկու տարի, կամ նույնիսկ մեկ տարի սրանից առաջ: Այս պայմաններում նորմաների վերանայումը ծայր աստիճան անհրաժեշտ էր:

Գործարաններն այժմ սարքավորված են անհամեմատ ավելի լավ, քան այդ յերկու տարի սրանից առաջ էր: Ամենուրեք ստախանովականները գործադրում են նոր, առաջավոր տեխնոլոգիա, մտցնում են ռացիոնալիզատորական ձեռնարկումներ, վորոնք մեծ չափով նպաստում են աշխատանքի արտադրողականության բարձրացմանը:

Այնտեղ, վորտեղ նորմաների ու գնահատումների վերանայման աշխատանքին մոտեցել են բոլշևիկներն, քաղաքական պատասխանատվության զգացումով, այնտեղ այդ հրաշալի արդյունք է տվել:

Որինակ, լավ անցավ նորմաների ու գնահատումների վերանայումն ավիացիոն արդյունաբերության մեջ: Նորմաների վերանայման ժամանակ գործարաններից մեկում կենսագործվեցին 163

կազմակերպական և 60 տեխնիկական ձեռնարկումներ: Նորմաների ու գնահատումների վերանայումն այստեղ անց էր կացվում ստախանովականների, ցեխերի պետերի ամենալայն մասնակցությամբ: Դրա շնորհիվ նորմաները չկատարող բանվորների թիվը գրեթե չափեցավ նոր նորմաներ մտցնելուց հետո: Յեթե հին նորմաները չէր կատարում բանվորների 11 տոկոսը, ապա նոր նորմաները չի կատարում բանվորների 11,3 տոկոսը: Այդ նույն ժամանակ բանվորների 31,2 տոկոսը նոր նորմաները կատարում են 150 տոկոսով և ավելի:

Առանձին ստախանովականներ նոր նորմաներով աշխատելիս ցույց են տալիս աշխատանքի բարձր արտադրողականության օրինակներ: Այսպես, ավիացիոն գործարաններից մեկում կորոզ Գոլչենկոն, յերբ նորման 30 դետալ էր, մի հերթափոխում արտադրում էր 60 դետալ, իսկ հիմա, 60 դետալ նորմայի ժամանակ, նա սկսել է մշակել 104 դետալ: Չարխազործ Լորդան առաջ, յերբ նորման 10 դետալ էր, մշակում էր 26 դետալ, իսկ նորմաները վերանայելուց հետո, յերբ նորման 31 դետալ է, սկսել է մշակել 38 դետալ: Չարխազործ Շվեցը առաջ, յերբ նորման 38 դետալ էր, բաց էր թողնում 67 դետալ, իսկ հիմա, յերբ նորման 81 դետալ է, բաց է թողնում 96 դետալ:

Ինչո՞ւ է այդ բացատրվում: Ամենից առաջ նրանով, վոր արտադրության հրամանատարներն այդ ձեռնարկություններում անց են կացրել կազմակերպական-տեխնիկական ձեռնարկումներ, վորոնք թույլ են տվել, վոր առաջավոր բանվորները զգալիորեն բարձրացնեն աշխատանքի արտադրողականությունը: Այդ ձեռնարկություններում նորմաները նախապատրաստելու և հենց վերանայելու ժամանակ ցեխերի ղեկավարները և վարպետները իրացրին բանվորների շատ ռացիոնալիզատորական և գյուտարական առաջարկներ, անմիջապես աշխատատեղի մոտ կազմակերպեցին դազգյալի աշխատողների ինստրուկտաժի սխեմա: Միջոցներ ձեռք առան տեխնոլոգիական պրոցեսները բարելավելու և առկա տեխնիկան ավելի եփեկտիվ ոգտագործելու համար:

Նորմաների վերանայումը վնասարար կարգավորեց աշխատավարձի սխեման: Ինչպես հայտնի յե, աշխատավարձի գոյություն ունեցող սխեման վնասարարների կողմից խառնված էր և մեծ արդելակ էր հանդիսանում աշխատանքի արտադրողականությունը մեծացնելու համար մղվող պայքարում:

Գործարաններում կիրարկվում էին մեծ քանակությամբ հաշ-

վարկային պայմաններ: Ամեն քայլափոխում հաշվարկային պայմանները բարձր վորակ ունեցող բանվորների համար շատ ավելի ցածր էլին, քան անվորակ բանվորների համար: Ժողովրդի թշնամիներն ամեն կերպ խառնում էլին աշխատավարձի սխտեմը, վորպեսզի կադավրուձեն արտադրությունը, իջեցնեն բանվորների նյութական մակարդակը, իջեցնեն աշխատանքի արտադրողականությունը:

Բավական խճճվածություն գոյություն ունեն է, ասենք, դեռ մինչև այսօր տեղ-տեղ գոյություն ունի, այսպես կոչված պրոգրեսիվկայի գործադրման պրակտիկայում: Շատ դեպքերում վճարման պրոգրեսիվ սխտեմը վերածվում էր աշխատավարձը մեխանիկորեն բարձրացնելու միջոցի:

Աշխատավարձի նախկին սխտեմում յեղած ամենասակնաու խեղաթյուրումներից մեկը աշխատավարձի ամեն տեսակ «հավելավճարներն» ու «հավելումներն» էլին: Յերբեմն գետալները անմիջական մշակման համար հասնում էր 30 կոպ., իսկ ամեն տեսակի «հավելումները» հասցնում էլին 70 կոպեկի: Ստեղծվում էր համասարարություն: Քիչ վորակյալ, իսկ յերբեմն էլ պարզապես անփութ բանվորները շատ անգամ ստանում էլին նույն քան, վորքան է ստանալովականները, իսկ յերբեմն էլ՝ ավելի: Այսպիսի ճանապարհով արհեստականորեն արգելակվում էր աշխատանքի արտադրողականության աճումը: Արտադրանքի իջեցված նորմաները, հսկայական քանակությամբ «հավելումները», աշխատավարձի սխտեմում յեղած խճճվածությունն ուղղակի հասցրին պետական միջոցների շռայմանը, աշխատավարձի ֆոնդի հսկայական գերածախսի այն միջոցին, յերբ աշխատանքի արտադրողականության պլանը չեր կատարվում: Որինակ, «Ռուսակի դիզել» գործարանը 1938 թ. 11 ամսյա պլանը կատարեց 65 տոկոսով, իսկ մեկ բանվորին ընկնող ամսական միջին արտադրանքը կազմում էր տարեկան առաջադրանքի 72 տոկոսը, իսկ նրա ամսական միջին աշխատավարձը—117,6 տոկոսը: Հարկ կա՞ր դյոք զարմանալու, վոր գործարանը մինչև 3 միլիոն ուղբու գերածախս կատարեց: Ավելորդ է ասացուցել, վոր այդպիսի աշխատակությունները ձեռնառու էլին միայն ժողովրդի թշնամիներին, վորոնք ամեն կերպ ոգտագործում էլին այդ իրենց նուկալի քայքայիչ նպատակների համար:

Նորմաների ու գնահատումների վերանայման հետ միասին վերակառուցվեց նաև աշխատավարձի սխտեմը: Այս իմաստով

չատ ցուցանչական է վճարման սխտեմի վերակառուցման փորձը Կիրովի գործարանում: Մինչև նորմաների ու գնահատումների վերանայումն այդ գործարանում գործում էլին 550 պրեմիալ դրույքներ: Վերանայումից հետո աշտեղ մշակվեց միայն 7 տիպային պրեմիալ դրույք ժամանակավոր ձևով աշխատող բանվորների գլխավոր պրոֆեսիաների համար, այն է՝ սարքավորումը վերանորոգող փականագործների, ամբարձիչների վրա աշխատողների, չափողների, սարքավորումը կանոնավորողների, պատրաստի շինվածքների վրա հսկողների, լծասարք շինողների, յուղողների համար է այլն: Վճարման այդ նոր սխտեմը չդանդաղեց դրական արդյունք տալու:

Գործարանը սկսեց կատարել պլանը, չգերազանցելով աշխատավարձի ֆոնդը: Նոր սխտեմը տվեց արտադրության էյական վերելք:

Բնորոշ է նմանապես այն, վոր տեխնիկական հիմնավորված նոր նորմաներ ու գնահատումներ մտցնելուց հետո սկսեց նկատելիորեն բարձրանալ նաև բանվորների աշխատավարձը: Այսպես, որինակ, յեթե առաջ բանվորը պարկուճների ներքին տրամագծերը վողորկելուց մեկ հերթափոխում վաստակում էր 12 ուր., ապա վերանայումից հետո նա սկսեց վաստակել 18 ու 40 կ.: Մեխանիկական № 4 ցեխի չարխագործը № 21/64 գետալի մշակման համար առաջ մի հերթափոխում վաստակում էր 12 ու 32 կ., նորմաները վերանայելուց հետո սկսեց վաստակել 14 ու 21 կ.: Նման որինակներ կարելի յե շատ ու շատ բերել:

Մոսկվայի՝ վերամբարձ-տրանսպորտային սարքավորման «կրասնի բլոկ» գործարանում նորմաների ու գնահատումների վերանայումը թույլ տվեց հայտարարել ներգործարանային մեծ ուղերվներ: Չնայած վոր, որինակ, հայթայթման ցեխում նորմաները բարձրացրեցին 90 տոկոսով, դարբնոցային ցեխում՝ 70 տոկոսով, մեքենաշինական ցեխում՝ 60 տոկոսով, այդ ցեխերի շատ բանվորներ զգալիորեն գերակատարում են նոր նորմաները: Բավական է ասել, վոր դարբնոցային ցեխի բանվորները նորմաների վերանայումից հենց անմիջապես հետո սկսեցին այդ նորմաները գերակատարել 145 տոկոսով: Հայթայթման ցեխում, վորտեղ նորմաները ժամանակավորապես գրեթե յերկու անգամ իջեցված էլին, արտադրանքի նոր նորմաները կատարվում են 135—140 տոկոսով: Մեքենաշինական ցեխում նոր նորմաներն սկսեցին կատարել 150—160 տոկոսով: Այս փաստերն ուղղակի ցույց են

տալիս, վոր գործարանի ղեկավարները լիովին պատրաստ են նոր նորմաներ մտցնելու:

Գործարանում նոր նորմաների վերանայման հետ միասին անցկացրին կազմակերպական-տեխնիկական ձեռնարկումներ, վորոնք հնարավորութիւն են տալիս զգալիօրէն բարձրացնելու աշխատանքի արտադրողականութիւնը: Այսպէս, որինակ, մեքենայինական ցեխում անհամեմատ ավելի լավ է կազմակերպւած արտադրութիւնը և մասնավորապէս զաղէյահի մօտ աշխատողներին անհրաժեշտ գործիք հասցնելը, քան այդ առաջ եր: Մեխանիկական ցեխում ելեկտրողողման համար, Փրեզերային ու շաղափային աշխատանքների համար հարմարանք պատրաստեցին, ընդվորում հարմարանքների ոգնութիւնը բանօրը հնարավորութիւն ունի միաժամանակ միքանի ղետախներ մշակելու: Զուլող ցեխում անլախների կազապարումը սկսեցին կատարել դուլդ արկղներում (опора), վորը նույնպէս բարձրացրեց աշխատանքի արտադրողականութիւնը:

Մօլոտովի անլան ավտոգործարանի կռածու չուլուն ձուլող ցեխում նորմաների վերանայման ժամանակ անցկացրին մի շարք տեխնիկական ձեռնարկումներ, վորոնք թույլ են տալիս զգալիօրէն ղերակատարել նոր նորմաները: Այսպէս, որինակ, առաջին մաքրման ժամանակ ցեխում մեքենայացւած է ալրւած հողի հաւաքումը կազապարող տրանսպորտայրից: Արււլունքը յեղալ այն, վոր այդ աշխատամասում սկսեց աշխատել միայն յերկու մարդ, փոխանակ 12-ի, վորոնք աշխատում էին մինչև նորմաների վերանայումը: Բոլորովին վերացալ հինգ ավտոմեքենաների անհրաժեշտութիւնը, վորոնք առաջ հող էյին փոխադրում այդ աշխատամասում:

Զուլւածքի դասավորման գծի վրա յերկրորդ աղուր գցելը թույլ տվեց այստեղ լիկվիդացիայի յենթարկել պարապուրդները 25 տոկոսով և բարձրացնել դասավորողների ու կերտակի վրա աշխատողների բրնդաղների աշխատանքի արտադրողականութիւնը: Բնական է, վոր դրա հետ միաժամանակ զգալիօրէն բարձրացալ նաև այդ բանօրների աշխատավարձը:

Լենինգրադի՝ Կարլ Մարքսի անլան գործարանի ղալլանական ցեխում վանաները սպասարկող մարդիկ յերկար ժամանակ հերթի էյին կանդնում լվացող կառուցւածքների մօտ և խանգարում էյին միմյանց աշխատել: Բալական էր միայն նոր նորմաներ մտցնելու պրոցեսում այդ բրնդաղը բաժանել յերկու, տար-

բեր հերթափոխներում աշխատող բրնդաղների, վորպէսզի սկզբում լարւած թվացող նորմաները սկսեյին ղերակատարվել 60 տոկոսով:

Նոր նորմաների արագ յուրացման համար մղվող պայքարում վճռական նշանակութիւն ունի արտադրութիւն հրամանատարների կողմից ղաղէյահի աշխատողներին ցույց տրվող ոգնութիւնը: Վերցնենք որինակի համար Լենինգրադի՝ ՄՊՔՎ անլան փորձնական-մեխանիկական գործարանի № 2 ցեխը: Վարպետ Լեոնովին այստեղ ճանաչում են վորպէս հոգատար ղաստիարակի: Նա աճեցրել-հասցրել է բաղմաթիւ փորձված մողեկաղործներ: Լեոնովը հաղվաղեպ է նստում «կանտորկայում», ավելի հաճախ նա ղանլում է բանլորի գործասեղանի մօտ և ոգնում է մողեյների արագ պատրաստմանը: Արււլունքը յեղել է այն, վոր նրա աշխատամասում նորմաները ղկատարող բանօրներ ղկան: Նրա աշխատամասը միջին հալվով նորմաները կատարում է 130 տոկոսով:

Սակայն այնտեղ, վորտեղ ղեն անցկացնում կաղմակերպական-տեխնիկական ձեռնարկումներ, վորտեղ ղեն հրահանգում բանօրներին, վորտեղ քիչ են հոգում ռացիոնալիզատորական առաջարկների իրացման մասին, այնտեղ մենք ունենք նորմաների ղկատարման ղեպեր: Այսպէս, որինակ, ԳՈՄԶ-ի (Լենինգրադ) գործարանի բանլոր ընկ. Բոյարսկին նոր նորմաներ մտցնելու առաջին որերում այդ նորմաները կատարում էր միայն 85 տոկոսով: Պարզվեց, վոր տախտակը ղեր հարմարվում արկղին, իսկ վարպետը միջոցներ ղեր ձեռնարկել տախտակը ղտկելու համար: Յերը տախտակը ղտկվեց, Բոյարսկին սկսեց նորման կատարել:

Նոր նորմաները յուրացնելու ասպարեղում մեծ ղեր խաղաց ԺԿՍ-ի, ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի և ՀԱՄԿՍ-ի՝ աշխատանքային ղիսցիպլինայի ամրացման մասին 1938 թ. ղեկտեմբերի 28-ին ընդունած պատմական վորոշումը: Այսպէս, որինակ, Լնդհանուր մեքենայինութիւն Ժողկոմատի ձեռնարկութիւններում 1939 թվին՝ 1938 թվի նույն այդ ժամանակաշրջանի համեմատութիւնը բանլորների աշխատանքի արտադրողականութիւնը բարձրացալ 18,4 տոկոսով: Աշխատանքի արտադրողականութիւն ուղղութիւնը պլանն այդ ժամանակամիջոցում կատարվեց 102,8 տոկոսով:

Բաց այդ և մյուս Ժողկոմատների ձեռնարկութիւնների պրակտիկայից հայտնի փաստերը խոսում են այն մասին, վոր

այս տարվա հունվարին տեղի ունեցած նորմաների վերանայման ժամանակ այնուամենայնիվ լիովին հաշվի չեն առնվել մեր հնա-
րավորությունները ներգործարանային ռեգերվների հետագա մո-
բիլիզացիայի համար: Անհատկա՞ծ այս պատճառով մենք փաստեր
ունենք, յերբ նոր մտցված նորմաները կատարվում են զգալիո-
րեն ալիքի մեծ չափով, քան հին նորմաները: Այսպես, որինակ,
«Սպրինկլեր» գործարանում նորմաների կատարումը մինչև սրանց
վերանայելը կազմում էր 155 տոկոս, իսկ վերանայումից հետո՝
այս տարվա մարտին—157 տոկոս: «Լենպիշմաշ» (Գլավմոտովե-
լոպրոմի) գործարանում մինչև վերանայումը նորմաները կա-
տարվում էին 169 տոկոսով, վերանայումից հետո—171 տոկո-
սով: Այս միաժամանակ արդյունքն է և այն բանի, վոր մի շարք
ձեռնարկություններում չեն հասկացել նոր մտցված նորմաները
տեխնիկապես հիմնավորելու ուղղությամբ աշխատանք տանելու
բացառիկ նշանակությունը և ձգտում էին լուրջ մեխանիկորեն
կատարելու սահմանված տոկոսը:

Այս փաստերը խոսում են այն մասին, վոր մենք ղեկուս շատ
անելիք ունենք տեխնիկական նորմավորման գործը կարգավորե-
լու, մեր յերկրում վերջին տարիների ընթացքում ձեռք բերած
տեխնիկայի մակարդակի հետ այդ գործը լիովին համապատաս-
խան դարձնելու ասպարեզում:

Աշխատանքային գիտելիքների մասին ՀամԿ(Բ)Կ ԿԿ-ի, ԺԿԽ-ի
և ՀԱՄԿԽ-ի պատմական վորոշումը հսկայական չափով նպաստեց
արտադրության մեջ բոլշևիկյան կարգ ու կանոն հաստատելու
գործին: Այդ վորոշման հրապարակումից հետո խիստ կերպով
կրճատվեց գործալքումների թիվը ձեռնարկություններում ու
հիմնարկություններում, մեծացավ աշխատանքի արտադրողակա-
նությունը:

1938 թ. դեկտեմբերի 28-ի վորոշումը խորտակիչ հարված
հասցրեց բոլոր նրանց, ովքեր չեն ցանկանում աշխատել, ով գե-
րադասում է լողրություն անել, գործալքել: մեր արտադրության
մեջ յեղած ամեն տեսակ այն ավարաներին, գործարանից գոր-
ծարան թոշողներին ու կազմալուծիչներին, վորոնք խանդարում
են մեկ աշխատանքի արտադրողականության համար մղած պայ-
քարում:

Խորհրդային պետության մեջ, վորտեղ բանվորներն ու ծա-
ռայողներն աշխատում են վոչ թե կապիտալիստների համար, այլ
իրենց համար, իրենց հարազատ պետության համար, գոյություն

ունի աշխարհում ամենակարճ աշխատորը: Խնդիրն այն է, վոր
այդ աշխատորն ոգտադորձենք լրիվ, չկորցնելով վոչ մի վայր-
կյան, անչեղորեն բարձրացնելով աշխատանքի արտադրողակա-
նությունը:

* *

Ստալինյան յերրորդ հնգամյակի պլանը խորհրդային ժողո-
վրդի առաջ նոր գրանդիոզ խնդիրներ առաջ քաշեց աշխատանքի
արտադրողականության բարձրացման բնագավառում: 1942 թվա-
կանին աշխատանքի արտադրողականությունն արդյունաբերու-
թյան մեջ պետք է աճի 65 տոկոսով: Այդ կապահովի յերրորդ
հնգամյակի վերջում արդյունաբերական արտադրանքի աճը 1937
թվի համեմատությամբ 62 միլիարդ ուրբով:

Ստալինյան յերրորդ հնգամյակի առաջադրանքների կատա-
րումն ու ղեկավարումը կարագացնի ԽՍՀՄ հիմնական տըն-
տեսական խնդրի լուծումը: Ստալինյան յերրորդ հնգամյակը
կկատարվի ու կգերակատարվի: Հենց դրանով վճռական քայլ
կարվի ՀամԿ(Բ)Կ XVIII համագումարի կողմից առաջադրված
ստալինյան լողունգի կատարման ասպարեզում, այն է՝ մոտակա
10—15 տարում հասնել և անցնել գլխավոր կապիտալիստական
յերկրներից մեկ տնտեսական տեսակետից, այսինքն բնակչու-
թյան մեկ շնչին ընկնող կարևորագույն արդյունաբերական շին-
վածքների արդյունաբերական արտադրության չափերի իմաս-
տով:

Մասնաշխատանքային շարժման հզոր վերելքը, ստա-
լիստական աշխատանքի կազմակերպման կոլեկտիվ ձևերի զար-
գացումը—բոլոր բանվորների, կոլտնտեսականների, ինտելիգեն-
ցիայի աշխատանքի բարձր արտադրողականության հասնելու
և ղրանով իսկ խորհրդային ժողովրդի կողմից պատմական մեծ
նպատակն արագորեն կենսագործելու ճիշտ ճանապարհն է:

Խորհրդային կառավարության ղրախ Վյաչեսլավ Միխայլո-
վիչ Մոլոտովի՝ ժողովրդին արած կոչը—կատարել լեհական
մագնատների լծից Արևմտյան Բելոռուսիայի և Արևմտյան Ուկ-
րաինայի աշխատավորությանը ազատելու պատմական միսիան—
մեր յերկրում հայրենասիրության նոր հզոր վերելք, ստալիա-
նովյան աշխատանքի նոր մասնաշխատանքի հաղթանակներ առաջա-
ցրեց:

«Այժմ մեր խնդիրն է,—ասաց 1939 թ. սեպտեմբերի

17-ին արտասանած իր պատմական ճառում ընկեր Մարտովը, — յուրաքանչյուր բանվորի և գյուղացու խնդիրն և, յուրաքանչյուր ծառայողի և ինտելիգենտի խնդիրն և՛ աղելորեն և՛ անձնփրարար աշխատել իր պոստում և գրանով ոգնություն ցույց տալ կարմիր Բանակին»:

Այդ հզոր կոչը ջերմ արձագանգ գտավ մեր ժողովրդի միլիոնավոր մարդկանց սրտերում. մեր Ֆարրիկաների ու գործարանները բազմակողմանի ու գունեղ կյանքը որեցոր նշվում և աշխատանքային հերոսական գործերի հետզհետե ավելի մեծ քանակով: Բանվորների ու բանվորուհիների՝ միամամանակ մեծ քանակությամբ դադդյահների սպասարկմանն անցնելը, պրոֆեսիաների համատեղումը, մասսայական գյուտարարության զարգացումը, տեխնոլոգիայի վճռական բարելավումը, աշխատանքի եֆեկտիվության ավելի մեծ վերելքը ստախանովյան շարժումը բարձրացնում են հետեյալ, ավելի բարձր աստիճանի, նոր հնարավորություններ են բացում աշխատանքի բարձր արտադրողականության համար մղվող պայքարում:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	62
I. Մեր շինարարության ամենակարևոր փաստը	3
II. Մեր ժամանակի անհաղթահարելի շարժումը	20
III. Արտադրության սոցիալիստական տեխնոլոգիայի համար	31
IV. Ավելի՛ լայն թափ դյուտարարությանը և ուսցիսնալիզացիան	41
V. Դադդյահների, մեքենաների, գործիքների և հարմարանքների հասարակական ստուգատեսները	49
VI. Ստախանովյան աշխատանքի կազմակերպման կոլեկտիվ ձևերի համար	60
VII. Նոր տեխնիկա — նոր նորմաներ	71

Քարզմ. Հ. Հաղարթյան
Խմբ. Բ. Ն. Դավթյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբազրիչ Հ. Դուրսեանյան
Կանարով սրբազրիչ Լ. Աբովյան

Դրամիլիաի լիազոր Վ. 1175, հրատ. № 821
Պատվեր № 141, արժ. 3000
Բղթի չափը 60 x 92 ¹/₁₆ (38.400 տղ. նիշ 1 տղ մամուլում)
5 ¹/₂ տղ. մամուլ, 2 ³/₈ թերթ թուղթ
Հանձնվել է արտադրության 14/V 1940 թ.
Ստորագրվել է տպագրելու 21/V 1940 թ.
Գինը 1 ո. 50 կ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության
առկալան, Յերևան, Ալլահիբեդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0204066

ԳԻՆԸ 1 Ռ. 50 Կ.

Г. ДОБРОВЕНСКИЙ
НЕПРЕОДОЛИМОЕ ДВИЖЕНИЕ
СОВРЕМЕННОСТИ

Государственное издательство политической литературы
Ереван ● 1 9 4 0